


ԱՐԼՈՐՈՒՎԻ ՅԵՐԱԶԸ

891 ԿԻ

Գ-77



27 AUG 2006

ՀԱՅԱՍՏԱՆԵՆԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

79 NOV 2010

Ի. Ա. ԳՈՆԶՈՐՈՎ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ  
ՍԵՐԻԱ  
№ 120

# ՄԲԼՈՄՈՎԻ ՅԵՐԱԶԸ

891.71

Գ-77

ՊԵՏԶՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

138

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

891.71.

9-77

այ.

Ի. Ա. ԳՈՆՉԱՐՈՎ

118

# ԱՐԼՈՄՈՎԻ ՅԵՐԱԶՐ

(ՀԱՏՎԱԾ «ԱՐԼՈՄՈՎ» ՎԵՊԻՑ)

Վ. Կ. Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.

Թարգմանություն  
Մ. ԽՈՆՉԱԳՅԱՆԻ

22 .03. 2013

10529

№ 531000111ԱՍԻ  
Գ ԱԴԱՐԱՆ  
№ 120

ԱՐԼՈՍԱՎԻ ՅԵՐԱԶԸ

ՊԵՏՏՐԱՏԻ ՏՄԱՐԱՆ  
ԳԼԱՎԼԻՏ 6426 (Բ)  
ՀՐԱՏԱՐԿ. 1663  
ՊԱՏՎԵՐ N 2802  
ՏԻՐԱԾ 4000



3351  
38

Վորտեղ ենք մենք: Յերկրի վոր որհնած  
անկյունն և սեղափոխել մեզ Արյոմովի յե-  
րազը: Ի՞նչ հրաշալի յերկիր և:

Ճիշտ և, այնտեղ ծով չկա, չկան վոչ  
բարձր լեռներ, Ժայռեր ու անդունդներ, վոչ  
թավ անտառներ, վոչինչ վեհասարանչ, վայ-  
րենի ու մռայլ:

Յեզ ինչի համար և այդ վեհասարանչն ու  
վայրենին: Ծո՞ւֆն՝ որինակ, — աստված իր  
հետ: Եա մարդուս վրա թախիժ և միայն բե-  
րում . նրան նայելիս մարդու լացն և գալիս:  
Ջրերի անհուն փովածքի անաջ մարդու սիր-  
տը չփոթվում և յերկյուղից և անեզր տեսա-  
րանի միտրինակությունից տանջված հայաց-  
քը հանգստանալու տեղ չի գտնում:

Ալիքների մոնչյունն ու կատաղի վորտար  
թույլ լսողությունը չեն շոյում. նրանք աչ-  
խարհի սկզբից շարունակ նույն մռայլ ու ան-  
մեկնելի բովանդակությամբ յերգն են կրկ-  
նում և նրա մեջ շարունակ լսվում և նույն հա-  
ռաչանքը, նույն գանգատները՝ կարծես տան-  
ջանքի դատապարտված հրեչի և ինչ վոր ա-  
րարածների գեղ, չարագուշակ ձայները:

Շուրջը Թասուններ չեն ծվլում: միայն լուս ճայերը, գատապարտվածների նման, վրահատ սուրում են ավերի մոտով և պատույաներ գործում ջրի վրա:

Գազանի մոնչյունն անզոր և բնության այդ հեծկլտանքների առաջ: Վոչինչ է և մարդու ճայնը. և ինքը մարդը այնքա՞ն փոքր է, թույլ, այնքա՞ն աննշմարելի կերպով չքանում է ընդարձակ տեսարանի մանրամասնությունների մեջ: Այս է պատճառը, դուրս, վոր նրա համար այնքան ծանր է ծովին նախելը:

Չէ՛, աստված այդ ծովի հետ: Նույն իսկ նրա անզորությունն ու անշարժությունը չեն ծնում հոգու մեջ ամփոփիչ զգացում. ջրային զանգվածի հազիվ նշմարելի տատանումների մեջ մարդ շարունակ տեսնում է նույն անհուն, Թեև քնած ույժը, վորը յերբևմրն այնպես թունոտ կերպով ծաղրում է նրա անվեհեր մասհզացումները, նրա բարձր ջանքերն ու աշխատանքը:

Լեռներն ու անդունդներն ել մարդու զրվարձության համար չեն ստեղծված: Նրանք ահարկու յեն, սարսափելի, վորպես վալրի դադանի բաց թողած և մարդու վրա ուղղված մագիլներն ու տոտաները. նրանք չափազանց կենդանի կերպով են հիշեցնում մեզ մեր հոգեդեն կազմությունը և պահում են՝ կյանքը կորցնելու յերկյուղի և թախիծի մեջ: Ու յերկինքն այնտեղ՝ մայրերի և անդունդների վրա

րա, այնպես հեռու և անհասանելի յե թվում, վոր նա, կարծես, հրաժարված լինի մարդկանցից:

Սրա նման չեր այն խաղաղ անկյունը, վորտեղ հանկարծ ընկալ մեր հերոսը: Ե ու 1

Յերկինքն այնտեղ, ընդհակառակը, կարծես ավելի մոտ է հպվում գետնին, վորք նետերն ավելի ուժեղ արձակելու, այլ, թեքիս, նրան ավելի ուժեղ ու սիրով գրկելու համար. նա գլխավերելում տարածվել է այնպես ցած, վորպես ծնողական հուսալի հարկ, կարծես բնարյալ անկյունը ամեն տեսակ ազհավերքներից պահպանելու համար:

Արեւին այնտեղ պայծառ ու վառ լուսավորում է կես տարվա շափ և հետո մեկեն ու մեկ չի հեռանում այնտեղից, այլ, կարծես ակամա, կարծես շուտ է գալիս մի յերկու անգամ ել նայելու սիրած տեղին և աչնան մառախլապատ որբերին մի պայծառ ու տաք որ ել պարգեվելու:

Լեռներն այնտեղ կարծես միայն մոգելներն են այն սոսկալի, ինչ վոր տեղ կանգնեցրած յեռների, վորոնք սարսեցնում են մարդու յերեվակայությունը:

Սա թեք բլուրների մի շարք է, վորոնցից դուրեկան է խայտալով մեջքի վրա գլորվել, կամ նրանց վրա նստած մտախոհ նայել մայր մանող արեվին:

Ուայտալով ու խաղալով ուրախ վազում է զեար. նա մերթ դուրս է գալիս ամբերից և լայն

լծակ կազմում, մերթ՝ թելի նման արագ սը-  
լանում, մերթ կարծես, մտքի հետ ընկած,  
հանգստանում եւ եւ հանդարտիկ սողում քա-  
րերի վրայից, իրենից բաց թողնելով չորս  
կողմի վրա կայտառ վտակներ, վորոնց մըը-  
մունջից քաղցր նիրհն եւ գալիս մարդուս վրա:

Ամբողջ անկյունը տասնհինգ-քսան վերստ  
տարածութեան վրա ներկայացնում եր մի  
շարք գեղանկար ետյուզներ, ուրախ, ժպտուն  
դաշտանկարներ:

Վճիտ գետակի ավազոս եւ թեք ավերբ,  
բլուրից դեպի ջուրը ձգվող մանր մացառու-  
տը, թեքլանջ ձորակը՝ փտակը հատակին եւ  
կեչու պուրակը—բոլորը, կարծես, դիտամար  
սազացրած լինեյին մեկը մյուսին եւ վարպե-  
տորեն նկարած:

Հուզումներից տանջված, կամ սրանց բո-  
լորովին անծանոթ սիրտը ձգտում ե թագնվել  
բոլորից մոռացված այդ անկյունում եւ ապրել  
բոլորին անհայտ մի յերջանկութեամբ: Ամեն  
ինչ այնտեղ խոստանում ե անդորր յերկարա-  
կեցութեան մինչ մազերի դեղնելը եւ աննկա-  
տելի՝ քնանման մահը:

Տարին այնտեղ բոլորում ե կանոնավոր ու  
անվրդով: Որացույցի նշումով մարտին կգա  
դարունը, բլուրներից կվազեն պղտոր փտակ-  
ներ, գետինը կլճկի եւ տաք դոլորչի կրարծ-  
րացնի: Գեղջուկը կհանի քուրքը, շապկանց  
դուրս կգա դուռը եւ ձեռքը աչքերին բռնելով,  
բավականութեամբ կթօթվի ուսերը՝ յերկար

դմայլելով արեւով: Հետո կքաշքշի շուտ տը-  
ված սայլի այս կամ այն լծափայտից, կամ  
կտնտղի եւ կլոտնահարի չարդախի տակ պա-  
րապ ընկած արորը, պատրաստվելով սովորա-  
կան աշխատանքների:

Գարնանը ձյունախառն փոթորիկները  
հանկարծակի չեն վերադառնում, չեն ծած-  
կում դաշտերը եւ ձյունից ձղափոտոր չեն լի-  
նում ծառերը:

Ձմեռը վորպես անմատչելի, սառը գեղեց-  
կուհի, պահպանում ե իր բնավորութեանը  
ուղիղ մինչեւ տաքութեան որինադրած ժա-  
մանակը, չի գրգռում անակնկալ հալ-հլոցով  
եւ կուչ ու հուպ չի ածում չլսված սառնամա-  
նիքներով: Ամեն բան գնում ե բնութեան նա-  
խորոշած ընդհանուր, սովորական կտրգով:

Նոյեմբերին սկսվում ե ձյուն ու սառնա-  
մանիք ե Ջրորհնեքին այնքան ե սաստկանում,  
վոր գեղջուկը մի բոպե խրճիթից դուրս գա-  
լով, վերադառնում ե անպատճառ յեղյամա-  
պատ մորուքով: Իսկ փետրվարին զգայուն  
քիթն արգեն ոգի մեջ առնում ե մոտալուտ  
դուրնած փափուկ շունչը:

Իսկ ամառը. ամառն այն յերկրում ա-  
ռանձնապես հրապուրիչ ե: Այնտեղ պետք ե  
վորոնել թարմ, չոր ոգ՝ ծծված վո՛չ թե կիտ-  
րոնի ե վո՛չ դափնիի, այլ պարզապես բարձ-  
մենակի, մայրու ե թխենու բուրմունքով. այն-  
տեղ պիտի վորոնել պարզ որեր, թեթեւ այ-

րոզ, բայց վոչ կիզող արեվի ճատագայթներ  
և գրեթե յեռամսյա ջինջ յերկինք:

Պարզ որերն ել վոր սկսվում են՝ տեվում  
են յերեք-չորս շաբաթ: Յերեկոն ել տաք է  
այնտեղ և գիշերը հեղձուկ: Ասողերն այնպե՛ս  
քաղցր, ընկերաբար առկայծում են յերկնքից:

Թեկուզ անձրեր—վո՛րպիսի բարեբեր ա-  
մառնային անձրեվ: Շոտում է աշխույժ, ա-  
ռաս, ուրախ թուչկոտում, հանկարծակի ու-  
րախացած մարդու խոշոր և տաք արցունքնե-  
րի նման: Բայց հենց վոր դադարում է՝ արե-  
վը նորից արդեն սիրո պարզ ժպիտով գննում  
և ցամաքեցնում է դաշտերն ու բլրակները և  
նորից ամբողջ յերկիրը, ի պատասխան արե-  
վին՝ ժպտում է յերջանիկ:

Գյուղացին ուրախ վողջունում է անձրե-  
վին.—«Անձրեվը կթրջի, արեվը կցոմաքաց-  
նի»—ասում է նա, հաճույքով դեմ անելով  
դեմքը, ուսերն ու մեջքը հորդ անձրեվին:

Մրրիկները սարսափելի չեն այնտեղ, այլ  
միայն բարեբեր: Շարունակ լինում են միյեվ-  
նույն սահմանած ժամանակ, գրեթե յերբեք  
չմոռանալով Յեղիայի որը, կարծես ժողովրդ-  
դի մեջ հայտնի ավանդությունը պահպանելու  
մաքով: Քանակությունն ու հարվածների ու-  
ժըն ել ամեն տարի նույն են, կարծես դան-  
ձարանից ամբողջ յերկրին մի տարվա համար  
բաց է թողնվում ելեկտրականության վորոշ  
չափ:

Այն յերկրում վո՛չ սարսափելի վոթորիկ-  
ներ և վո՛չ ավերածություն են լաված:

Լրագիրներում վոչ վոք յերբեք այսպիսի  
բան չէ կարգացել այդ ասածու որհնած ան-  
կյունի մասին: Յեվ յերբեք ել վոչինչ տպա-  
գրած չէր լինի և չէյին լսի այդ յերկրի մա-  
սին, յեթե միայն այրի գեղջկուհի քսանութ  
տարեկան Մարինա Կուլկովան չճներ միան-  
դամից չորս յերեխա. այդ բանի մասին լուել  
այլ ևս վոչ մի կերպ չէր կարելի:

Աստված այդ կողմերին չէր պատժում  
վոչ յեղիպտական ժանտախտով և վոչ ել հա-  
սարակ ախտերով: Բնակիչներին վոչ վոք չէր  
տեսել և չի հիշում վոչ մի յերկնային սարսա-  
փելի նշան, վոչ հրեղեն գնդեր, վոչ անսկիւկալ  
մթություն. այնտեղ թունավոր սողուններ  
չէյին ապրում, մորեխ չէր յերեվում, չկային  
վոչ մանչացող առյուծներ, վոչ վոռնացող  
վազրեր, վոչ նույնիսկ արջեր ու գայլեր, վո-  
րովհետեվ անտառներ չկան: Դաշտերում և  
գյուղում միայն բազմաթիվ վորոճող կովեր,  
մայր վոչխարներ և կչկչացող հավեր են թա-  
փառում:

Աստված գիտե՛ այս խաղաղ անկյունի  
քնությունը կրափարարե՞ր արդյոք բանա-  
տեղծին կամ յերազողին: Ինչպես հայտնի յե,  
այդ պարոնները սիրում են պել-պել նայել  
յուսնին և ապանջ դնել սոխակի գայլայլիկին:  
Սիրում են նրանք սեթեվեթ-լուսինը, վոր  
գուզված լինի բաց դեղնազույն ամպերով և



խորհրդավոր կերպով թափանցի ծառերի  
ճյուղերի արանքով, կամ արծաթե ճառա-  
գայթների խուրձեր լցնի իր յերկրպագուների  
աչքերը:

Այնինչ այս կողմերում վոչ վոք իսկի չը-  
գիտեր ել, թե ի՛նչ է լուսին ասածը. բոլորը  
նրան անվանում էյին «ամիս»<sup>\*</sup>): Նա ինչ վոր  
բարեսրտությամբ, չուած աչքերով նայում եր  
գյուղեքին ու գաշտերին և շատ նման եր մաք-  
րած պղնձե կոնքի:

Բանաստեղծն իզուր կնայեր խանդավառ  
հայացքով նրան. նա նույն պարզասրտու-  
թյամբ կնայեր և բանաստեղծին, ինչպես կը-  
լորաթուռ գյուղացի գեղեցկուհին նայում է ի  
պատասխան քաղաքացի կնամուլի պերճախոս  
հայացքներին:

Սոխակի ձայն ել չի լսվում այդ կողմե-  
րում, գուցե այն պատճառով, վոր այնտեղ  
սաղարթախիտ ապաստաններ և վարդեր չեն  
յեղել: Բայց լորերի ի՛նչ առատություն. ա-  
մաւը հացը հավաքելիս՝ տղաները ձեռքով են  
բռնում նրանց:

Չկարծեք, սակայն, վոր լորերն այնտեղ  
դաստրոնոմիական պերճանքի առարկա յեն  
կազմում. վո՛չ, այդպիսի ապականում չի մտել  
այն յերկրի բնակիչների բարքերի մեջ: Լորը  
մի թռչուն է, վոր կանոնադրությամբ կերա-

<sup>\*</sup>) Լուսնի մի շրջապտույտը կատարվում է մեկ ամսվա ընթաց-  
քում, այդ պատճառով էլ ռուս ժողովուրդը, բացի лунна բառից,  
լուսնի համար գործ է ածում նաև месяц (ամիս):

կուրների շարքը չի մտցրած. նա այնտեղ  
մարդկային լսելիքն է քաղցրացնում յերգով:  
Այդ է պատճառը, վոր դրեթե ամեն տան տա-  
նիքի տակ, թեյի վանդակի մեջ, լոր է կախ  
տված:

Բանաստեղծն ու յերազողը մինչեվ ան-  
գամ գոհ չենյին մնալ այդ համեստ և անշուք  
տեղի ընդհանուր տեսարանից:

Նրանց չեր հաջողվի այնտեղ տեսնել վո-  
րեվի յերեկո՝ շվեցարահաւն կամ շուտանդա-  
կան ճաշակով, յերբ ամբողջ բնությունը՝ և՛  
անտառը, և՛ ջուրը, և՛ խրճիթների պատերը,  
և՛ ավազոտ բլուրները, ամեն ինչ վառվում է,  
կարծես, բոսորային ցուլքով, յերբ այդ ծիրա-  
նագույն ֆոնի վրա վորոշակի չըջագծվում է  
ալազոտ, վոլորապտույտ ճամփով գնացող  
ձիավոր տղամարդկանց խումբը, վորոնք ու-  
ղեկցում են վորեվե լեզիի գրոսանքին դեպի  
մոռյլ ավերակը և շապտում են անմատչելի  
ամրոցը, վորտեղ նրանց սպասում է պապի  
պատմած միջնադեպը յերկու վարդի պատե-  
րազմի մասին, վայրի այժը՝ ընթրիքին և ջա-  
հել միսսի յերգած բալլադան՝ տավիղի հըն-  
չյունների տակ—պատկերներ, վորոնցով ա-  
ռատությամբ լցրել է մեր յերեվակայությու-  
նը վալ՝տեր—Սկոտտի գրիչը:

Վո՛չ. վոչ մի այսպիսի բան չկար մեր  
կողմերում:

Ի՛նչպես ամեն ինչ անդորր է, ամեն ինչ

բնակողու այդ անկյունը կազմող յերեք-չորս  
դյուղերում:

Նրանք մեկը մյուսից հետո չէյին ընկած  
և, կարծես թե, մի վիթխարի ձեռք պատահ-  
մամբ շարտել եր նրանց և ցրիվ տվել զանա-  
զան կողմեր և այն ժամանակից այդպես էլ  
մնացել էյին:

Սրճիթներէց մեկը, ինչպես վոր ընկել է  
ձորակի առապարի վրա, այնպես էլ մնացել է  
այնտեղ անհիշելի ժամանակներէց ի վեր, կի-  
սով չափ ուղում կախված յեվ յերեք գոլաների  
հենված: Յերեք-չորս սերունդ խաղաղ և յեր-  
ջանիկ ապրել են նրանում:

Հավն էլ, կարծես, կվախենար այդ տունը  
մանկ: այնինչ այնտեղ կնոջ հետ բնակվում  
էր Անիսիմ Սուսլովը, մի խոշոր տղամարդ,  
վորն իր բնակարանում ամբողջ հասակով չէ  
տեղավորվում:

Իսկապես ամեն մարդ էլ չի կարող մանել  
Անիսիմի խրճիթը, վոր թերեվս հնարավոր  
յինի, յեթե այցելուն կարողանա համոզել նը-  
րան (խրճիթին) շուտ տալ քամակը դեպի ան-  
տաս, իսկ ճակատը դեպի իրեն:

Պատշգամբը կախված է դեպի ձորակը և  
նրա վրա վորք գնելու համար՝ մի ձեռքը պի-  
տի ձգես քոլերին, մյուսը՝ տան կտուրին և ա-  
պա յոք տաս ուղղակի պատշգամբ:

Մյուս խրճիթը ձիծեռնակի բնի պես կպել  
է թմբի լանջին: Այնտեղ յերեքը պատահարաբար

իրար կողքի էյին, իսկ յեկուսն ընկած են  
ձորակի բուն հատակին:

Սաղաղ և քնափ է ամեն ինչ դյուղում.  
յուս խրճիթների դռները կրնկի վրա բաց են,  
վոչ վոր չի յերեվում, միայն ճանճերի բազ-  
մությունը թռչում և բզզում է հեղձուկ ո-  
ղում:

Սրճիթ մանողը ի դուր կկանչի բարձրա-  
ձայն. մեռելային լուսթյունը կյինի պատաս-  
խանը: Հազվադեպ խրճիթում, թերեվս իր  
սրերն հաշվող պատավի հիվանդոտ հառաչան-  
քը, կամ խուլ հազը կլսվի պատասխանի վա-  
խարեն, կամ միջնորմի հետեվից դուրս կը-  
գա շապկանց, բորիկ, յերկարամազ յերեք-  
ամյա յերեխա, յուս, շեշտակի կնայի ներս  
մանողին և յերկչոտությամբ հորից կթազ-  
նվի:

Նույն խոր անդորրությունն ու խաղա-  
ղությունն են տիրում նաև դաշտերում: Տեղ-  
տեղ միայն մըջյունի նման անդադար աշխա-  
տում է սև արտի մեջ, կիզող արեվի տակ, ա-  
րորին գոռ տալով, քափ ու քրտինք մտած  
մածկալը:

Այդ կողմի մարդկանց բարքերի մեջ էլ  
թագավորում են խաղաղությունն ու անվրդով  
հանգստություն: Վո՛չ կողոպուտ, վո՛չ սպա-  
նություն, վո՛չ մի սարսափելի պատահար չը-  
կար այնտեղ. վոչ ուժեղ կրքեր, վոչ խիզախ  
ձեռնարկություններ չէյին հուզում նրանց:

Իսկապես ի՞նչ կրքեր ու ձեռնարկություն-

ներ կարող եյին վրդովել նրանց. ամեն մարդ աշնտեղ գիտեր ինքն իրեն: Այդ յերկրի բնակիչներն ուրիշ մարդկանցից հեռու եյին ապրում: Ամենամոտ դյուղերը և դավառական քաղաքը գտնվում եյին քսանհինգ և յերեսուն վերստի վրա:

Գյուղացիք վորոշ ժամանակ հացահատիկ եյին կրում դեպի Վոլգայի մերձավորագույն նավահանգիստը, վոր նրանց համար կողքիս և Հերքուլեսյան սյուներ եյին. սարին մի անգամ ել տոնավաճառ եյին գնում և այլևս վոչ վոքի հետ վոչ մի հարաբերություն չունեյին:

Նրանց շահերը կենտրոնացած եյին իրենց իսկ վրա. չեյին խաչաձեւվում վոչ վոքի շահերի հետ և չեյին դիպչում նրանց:

Նրանք գիտեյին, վոր նրանցից ութսուն վերստի վրա յե «նահանգը», այսինքն՝ նահանգական քաղաքը. բայց քչերն եյին գնում այնտեղ: Այն ել գիտեյին, վոր դենը, ավելի հեռու—Սարատովն և կամ Նիժնին. լսել եյին, վոր կա Մոսկվա և Պիտեր, վոր Պիտերից դենն ապրում են Փրանսիացիք կամ գերմանացիք: Այնուհետեւ, արդեն, նրանց համար, ինչպես հների, սկսվում եր մութ աշխարհը, հրեշներով, յերկզիսանի մարդկանցով, հսկաներով բնակեցրած անհայտ յերկրները, հետո խավարը, և վերջապես, այս բոլորը վերջանում եր այն ձկնով, վորն իր վրա պահում ե յերկերը:

Յեւ վորովհետեւ նրանց անկյունով անց ու դարձ գրեթե չկար, այդ պատճառով ել նրանք միջոց չունեյին նորագույն տեղեկություններ քաղելու, թե՛ ի՞նչ և կատարվում արար-աշխարհում: Փայտե ամաններ կրող քրեհարներն ապրում եյին քսան վերստի վրա և նրանցից ավելի չգիտեյին: Վոչ մի բան չկար նույնիսկ, վորի հետ իրենց նիստ ու կացը համեմատեյին— լավ են ապրում, թե՛ չե, հարո՞ւստ են, թե աղքատ, կարե՞լի յե արդյոք վորեւե բան ցանկալ— այն՝ վոր ուրիշներն ունեն:

Այդ յերջանիկներն ապրում եյին կարծելով, վոր ուրիշ կերպ չպիտի լինի և չի յե կարող լինել, հավատացած, վոր ուրիշներն ել հենց այնպես են ապրում և ուրիշ կերպ ապրելը մեղք ե:

Նրանք չեյին ել հավատա, յեթե նրանց ասեյին, վոր ուրիշները վորեվե այլ կերպ են վարում, ցանում, հնձում, ծախում: Ել ի՞նչ կրքեր ու հուզումներ կարող եյին նրանք ունենալ:

Նրանք, ինչպես և բոլոր մարդիկ, ունեյին և՛ հոգսեր, և՛ թուլություններ, հարկի ու բահրայի մուծում, քուն ու ծուլություն: Բայց այս բոլորը նրանց վրա եժան եր նրստում— արյուն չեր պղտորվում:

Վերջին հինգ տարվա ընթացքում, մի քանի հարյուր հոգուց վոչ վոք չեր մեռել, վոչ միայն բռնի, այլև բնական մահով:

Իսկ յեթե մեկն ու մեկը ծերությունից, կամ վորեւէ հնացած հիվանդությունից հանգչում եր հավիտենական քնով՝ յերկար ժամանակ զարմանում եյին այդպիսի անսովոր յերեւոյթի վրա:

Այնինչ նրանք ամենեւին չզարմացան, որինակ, յերբ դարբին Տարասը բաղնիքում ինքն իրեն մահվան դուռն եր հասցրել զուրջով, մինչ այն սասիճան, վոր կարիք յեղավ նրան ջրով ուշքի բերել:

Հանցանքներից մեկը, այն է՝ սխտուի, գաղարի և շողգամի գողությունը բանջարանոցներից, շատ ասարածված եր: Մի անգամ էլ անսպասելի կերպով անհայտացան յերկու խողի գոճի և մի հավ: Դեպքը վրդովեց ամբողջ չրջակայքը և միաձայն վերագրվեց նախրնթաց որը տոնավաճառ գնացող փայտյա ամաններով բեռնավորված քարավանին: Թե չե, բնականապես, ամեն տեսակի պատահարներ շատ հազվադեպ եյին:

Ասենք՝ մի անգամ էլ, գյուղից գուրս, կամուրջի մոտ, արխի մեջ գասն մի պառկած մարդ, վորը, ըստ յերեւոյթին, հետ եր մնացել քաղաք գնացող արանից:

Առաջինը յերեխաները նկատեցին նրան, արասիով գյուղ վազեցին և լուր բերին ինչ փոքր անարկու ոճի, թե՛ այլակերպած մարդու մասին, վորը պառկած է արխում, ավերացնելով, վոր նա իրենց հետեւից բնկավ ու քիչ եր մնում Կուղկին ուտեր:

3351  
1838

Գեղացիներից սրտոտները գինվեցին յեղաններով, կացիններով և բազմությամբ գընացին դեպի արխը:

— Ո՛ւր եք գնում, — կանգնեցնում եյին ծերերը, — գլխներիցդ ձեռ ե՞ք վեր կալել, ի՞նչ եք ուզում, չարչարիլ միք, ձեզ սախպող կա՞:

Բայց գեղացիք գնացին և հիտուն սաժենաչափ հեռվից սկսեցին ձայն տալ հրեշին գանողան ձայներով: Պատասխան չկար. նրանք կանգ առան, սպա նորից շարժվեցին առաջ:

Արխի մեջ, դուխը թմբին հենած պառկած եր մի գեղացի. նրա կողքին ընկած եր սուպրակը և փայտը, վորի վրա կախած եր յերկու գույգ տրեխ:


Գեղացիք չեյին վստահանում վոչ մտանալ, վոչ ձեռք տալ:

— Ե՛յ, աղբերացու, — ձայն եյին տալիս նրանք հերթով, քորելով վորը ծոճրակը, վորը մեջքը: — Ի՞նչ մարդ ես, ի՞նչ ես չինում այդտեղ:

Անցորդը գյուխը բարձրացնելու շարժում արավ, բայց չկարողացավ. նա ըստ յերեւոյթին հիվանդ եր, կամ շատ հոգնած:

Մեկը սիրտ առած՝ ուզում եր բզել նրան յեղանով:

— Մի նեղացնի, — զգովեցին շատերը. — ի՞նչ իմանաս ի՞նչ մարդ է. տեսնում ես ձայն չի հանում. բալքի թե մի... մի չարչարեք նրան, սղերք:



— Գնանք, — ասում է յին մի քանիսը. — ճիշտ ես ասում, գնանք. զարիր մարդ է, դըրանից խաթա կգա:

Յեվ բոլորը յետ գնացին դյուղ, պատմեցին ծերերին, վոր այնտեղ պառկածը ոտար է, վոր չինչ չի խոսում, միտքն էլ ի՞նչ է, աստված գիտե:

— Վոր ոտար է՝ հեռու կացեք. — ասում է յին խրճիթների պատերի տակ նստոտած և արմունկները ծնկներին դրած ծերունիները: Դուք իսկի չպիտի յեւ գնայիք:

Այսպես եր այն անկյունը, ուր հանկարծ տեղափոխվեց Աբրամովը յերազում:

Այնտեղ ցրված յերեք-չորս դյուղերէ, մեկը Սասնովկան եր, մյուսը՝ Վավիրովկան, միմյանցից մի վերստ հեռավորության վրա:

Սասնովկան և Վավիրովկան Աբրամովների տոհմի ժառանգական պատկենական կալվածն է յին, ուստի և հայտնի է յին Աբրամովկա ընդհանուր անունով:

Սասնովկումն եր գտնվում կալվածատիրոջ տունը և բնակութունը: Սասնովկից մոտ հինգ վերստ հեռավորության վրա գտնվում եր Վերխեովս դյուղը, վոր յերբեմն նույնպես պատկանում եր Աբրամովների տոհմին և վաղուց անցել եր ուրիշի ձեռքը և մի քանի յեւ այստեղ, այնտեղ ցրված խրճիթներ, վոր նույնպես հաշվվում է յին նույն դյուղի վրա:

Գյուղը պատկանում եր մի հարուստ կալվածատիրոջ, վորն իր կալվածում յերբեք

չեր յերևում: Կալվածին հսկում եր գերմանացի կառավարիչը:

Ահա և այդ անկյունի ամբողջ աշխարհագրութունը:

Իլյա Իլիչը արթնացավ իր փոքրիկ անկողնում. յոթ տարեկան է միայն: Նա ուրախ է, գվարթ:

Ի՞նչ լավիկն է նա — կարմիր, լիքը: Թ՛չիկներն այնպես կլորիկ են, վոր յեթե վորեւէ չարածճի դիտմամբ փքվի, էլի այդպիսի թչեր չի կարող սարքել:

Դայակն սպասում է նրա արթնանալուն. սկսում է հագցնել նրա գուլպաները. սա չի հնազանդվում, չարութուն է անում, թափահարում է վոտքերը: Դայակը բռնում է նրան և յերկուսն էլ հռհռում են:

Վերջապես դայակին հաջողվեց նրան վոտքի կանգնեցնել. նա լվանում է յերեխայի յերեսը, սանրում է գլուխը և տանում մոր մոտ:

Տեսնելով վաղուց մեռած մորը, վորին չափազանց սիրում եր, Աբրամովը յերազում անգամ ցնցվեց ուրախութունից և քնած տեղը նրա թերթերունքների տակից հանդարտ դուրս հոսեցին յերկու տաք արտասուք և անչարժացան:

Մայրն սկսեց նրան բուռն կերպով համբուրել. հետո գննեց նրան ազահ, հոգատար աչքերով — պղտորված չե՞ն արդյոք աչքերը, — հարցրեց, — վոր մի տեղը չի՞ ցավում, հարց

ու փորձ արտվ դայակին՝ հանգլստ ե՞ր քնած նա, գիշերը չի՞ արթնացել, քնած տեղը շուու ու մուռ չի՞ յեկել, տարություն չի՞ ունեցել: Հետո բռնեց ձեռքը և մոտ տարավ սուրբ պատկերին:

Այսուհեղ ծունկ չոքելով և մի ձեռքը պատ տալով նրան՝ թեխադրում էր աղոթքի խոսքերը:

Մանուկը ցրված կրկնում էր՝ նայելով պատուհանին, վորտեղից սենյակն էր լցվում զովն ու շեփորուկի (յասամանի) բուրմունքը:

— Մայրիկ, այսոր մենք զբոսնելու կերթա՞նք. — հարցնում էր նա հանկարծ, աղոթքի կիսին:

— Կե՛րթանք, հողյակս, — շտապով ասում էր նա, աչքը չհեռացնելով պատկերից և շտապելով վերջացնել աղոթքը:

Մանուկն ալարկոտ կրկնում էր խոսքերը, բայց մայրը նրանց մեջ դնում էր իր ամբողջ հոգին:

Հետո գնում էյին հոր մոտ, ապա թեյ խմելու:

Թեյի սեղանի մոտ Աբլումովը տեսավ իրենց տանն ապրող ութսունամյա դառամյալ մորաքրոջը. սա շարունակ փնթփնթում էր իր աղախնի վրա, վորը նրա աթոռի յետևին կանգնած, ծերությունից զլուխը ցնցելով, սպասավորում էր նրան: Այնտեղ են և նրա հոր հեռավոր ազգականներ՝ յերեք հասակավոր աղջիկ, նրա մոր մի քիչ ցնդած տագրը

և իրենց մոտ հյուր յեկած, յոթ հոգի ունեցող կալվածատեր Չեկմենյովը և ինչ-վոր պառավներ ու ծերուկներ:

Աբլումովների տան այս ամբողջ շքախումբը վրա պրծավ Իլյա Իլյիչին, ծածկեց նրան գովեստներով ու փաղաքջանքներով: Մանուկը հազիվ էր կարողանում սրբել անդուրեկան համբույրների հեռքերը:

Այնուհետև նրան կերակրում էյին չաքարահացով, պաքսիմաթով ու սերով:

Հետո մայրը, ելի փաղաքջելով, թողնում էր նրան գնալ զբոսնելու պարտիզում, բալիում, մարգագետնում, դայակին խտրվ պատվիրելով մանուկին մենակ չթողնել, թույլ չտալ մոտենալ ձիերին, շներին, այծին. տանից շատ չհեռանալ և, վոր գլխավորն է, չթողնել նրան ձորակը, վորպես չըջակայքում վատ համբավ ունեցող ամենատարաստիելի տեղը:

Մի անգամ այնտեղ մի շուն գասն, վորը կատաղած համարվեց միայն այն պատճառով, վոր նա մարդկանցից խույս տվեց, յերբ նրան վրա տվին յեղաններով ու կացիններով և անհայտացավ սարի քամակին: Չորն էյին շպրտում գեշերը. ձորակում յենթադրվում էյին ե՛. ավազակներ, ե՛. գայլեր, ե՛. գանազան ուրիշ արարածներ, վորոնք կամ այդ կողմերում, կամ հենց աշխարհում իսպառ գոյություն չունեյին:

Յերեխան չսպասեց մոր նախազգուշա-

ցումների վերջանալուն նա արդեն բախումն է:

Ուրախ դարմանքով, կարծես առաջին անգամ, նա զննեց և վազելվազ պատ տվեց ծնողական տունը, կողքի վրա ծոված դռնով, մեջտեղից իջած փայտյա տանիքով—վորոնց վրա բուսած եր քնքույշ, կանաչ մամուռ—յերերուն պատշգամբով, վերից և կողքերից կցած գանազան շենքերով և անխնամ այգով:

Նա սաստիկ ցանկանում է բարձրանալ ամբողջ տան շուրջը պատող անսյուն գալերեյան՝ այնտեղից գետակին նայելու համար: Բայց գալերեյան հին է, հազիվ հազ դիմանում է, և նրա վրա ման գալ թույլատրվում է միայն ծառաներին, իսկ պարոնները ման չեն գայիս:

Նա ականջ չեր դնում մեր արգելումներին և հենց ուզում եր ուղղվել դեպի գայթակղեցուցիչ աստիճանները, յերբ պատըզգամբում հայտնվեց դայակը և մի կերպ բռնեց նրան:

Նրա ձեռքից դուրս պրծավ դեպի խոտանոցը, գիրթ սանդուխքով այնտեղ բարձրանալու դիտավորությամբ, և հազիվ դայակը կարողանում եր հասնել խոտանոցին, վոր հարկավոր եր լինում շտապել արգելելու նրա աղավանոց բարձրանալու, աղալը և, աստված ազատի, մանավանդ ձորակը մտնելու դիտավորությունը:

— Տեր իմ աստված, սա յերեսա հո չե հոյ է, հոյ: Ախր, խելոք պիտի կենա՞ս, թե՛

չե, պարոն: Ամոթ ե՛, — ասում եր դայակը:

Դայակն ամբողջ որ ու գիշեր իրարանցման ու վազվզուքի մեջ եր: Նա տանջվում, ուրախանում եր յերեսայի համար, կամ յերկյուղ եր կրում, վոր նա վայր կընկնի ու քիթ ու պոունկը կջարդի. կամ մանկական անկեղծ փաղաքշանքները նրան հուզում, կամ յերեսայի հեռավոր ապագայի մասին անորոշ թախիծն եր նրան կլանում: Սրանով եր միայն բարախում նրա սիրտը. այս հուզումներով եր տաքանում պառավի արյունը և սրանով եր մի կերպ պահպանվում նրա քնակոլոլ կյանքը, վոր առանց սրան, գուցե, վաղուց մարած կլիներ:

Մանուկը, սակայն, միշտ թուփուն չե. նա յերբեմն հանկարծ հանդարտվում է: Դայակի մոտ նստած նայում է ամեն բանի սեռած աչքերով: Նրա մանկական խելքը դիտում է իր առաջ կատարվող յերևույթները. սրանք խոր տպավորվում են նրա հոգու մեջ, ապա աճում, հասունանում նրա հետ միասին:

Առավոտը հիանալի յե. ոգը գով, արևը դեռ շատ չի բարձրացել: Հեռու փովեցին յերկար ստվերները տան, ժայռերի, աղավանոցի, գալերեյի և ամեն ինչի: Պարախում և բախում գոյացան գով անկյուններ, վորոնք հրավիրում են քնի և մտազբաղության: Միայն հեռվում աշորայի դաշտը, կարծես, վառվում է կրակի նման և գետակն այնպես է

փայլում—պսպղում արևի աակ, վոր աչք է  
ծակում:

— Դայա՛կ, ի՞նչիցն է, վոր այստեղ  
մութն է, իսկ այնտեղ լույս. իսկ հետո այն-  
տեղ է՞լ լույս կլինի,—հարցնում է յերեխան:

— Այն պատճառով, սիրելիս, վոր արևը  
լուսնին ընդատաջ է գնւմ, չի տեսնում նրան  
և հոնքերը կիսում է, և հետո, յերբ տեսնում  
է հեռվից՝ պարզվում է:

Խորհում է մանուկը և շարունակ շուրջն է  
նայում. տեսնում է, թե ինչպէս Անտիպը գնաց  
ջրի. իսկ գետնի վրա, նրա կողքից գնում է  
մի ուրիշ Անտիպ, իսկականից տասն անգամ  
մեծ, տակառն էլ տան չափ է թվում, իսկ  
ձիու սավերը ծածկել էր ամբողջ մարգարե-  
տինը. սավերը միայն յերկու քայլ արավ  
մարգարետնի վրա և միանգամից անցավ սա-  
րբի յեակը, այնինչ Անտիպը դեռ բակից իսկի  
չէր ել գուրս յեկել:

Յերեխան էլ մի յերկու քայլ արավ, մի  
քայլ ևս և նա կանցնի սարբի են կողմը:

Նա կուզենար գնալ դեպի սարը, տեսնելու  
ինչ յեղավ ձին. նա ուզովեց դեպի բակի դու-  
ռը, բայց պատուհանից լավեց մոր ձայնը:

— Դայա՛կ, չե՞ս տեսնում, վոր յերեխան  
գուրս վազեց արևը: Հով տեղ տար նրան. ա-  
րևը գլխին կտա, կցավէ, սիրաը կխառնի, ա-  
խորժակը կփակվի: Այդպէս թողնես՝ նա հո  
ձորը կերթա:

— Ո՛Ք, լկսոված, — կամաց փնթփնթում

է դայա՛կը, — քարշ տալով նրան պատշգամբ:

Նայում է յերեխան և դիտում սուր ու մը-  
տառու հայացքով՝ ինչպէս և ինչ են անում  
չափահասները, ինչի յեն նվիրում նրանք ա-  
ռափտը:

Վոչ մի աննշան բան, վոչ մի գիծ չէր վը-  
րիպում նրա մանկական հարցասեր ուշադրու-  
թյունից: Անջնջելի կերպով մխվում է նրա հո-  
գու մեջ տան նիստ ու կացի պատկերը, փա-  
փուկ խելքը ծծվում է կենդանի որինակներով  
և անգիտակցաբար գծում է իր կյանքի ծրա-  
դիրը՝ չըջապատող կյանքի համաձայն:

Չի կարելի ասել, թե առափոռը Արլումով-  
ների տանը գուր էր անցնում, խոհանոցում  
կատրեա և կանաչի ձեռող դանակների ձայնը  
նույնիսկ գյուղն էր հասնում:

Սպասավորների սենյակից լավում է ճա-  
խարակի վզգոցը և գեղջիկուհու ցած, բարակ  
ձայնը. դժվար է վորոշել՝ լաց է լինում նա,  
թե յերգում է սնուցարատուից թախծալի մի  
յերգ՝ առանց խոսքերի:

Հենց վոր Անտիպը վերադարձավ՝ բակի  
զանազան անկյուններից տակառին մտտեցան  
կանայք և կառապանները դուլլերը, տաշտերն  
ու կժերը ձեռներին:

Ահա մի կին շաեմարանից խոհանոցն է  
տանում ամանով ալյուր և մի կույս ձու, ա-  
հա խոհարարը պատուհանից հանկարծ ջուր է  
դուրս լցնում և թրջում Արաբկին, վորն ամ-  
բողջ առափտը, աչքերը չհեռացնելով, նա-



յում ե պատուհանին, սիրալիք պոչով ե անում ե դունչը լպստում:

Ինքը ծերունի Աբլոմովն ել առանց զբաղմունքի չե: Նա՛ ամբողջ առավոտը նստած պատուհանի սուաջ, անվրեպ դիտում ե այն բոլորը, ինչ կատարվում ե բախում:

— Ե՛յ, Իգնաչկա, ի՞նչ ես տանում, ախմախ, — կհարցնի նա բակով անցնող սպասավորին:

— Դանակները տանում եմ սպասավորներին սենյակը՝ սրելու, — պատասխանում ե նա առանց աղաչին նայելու:

— Լա՛վ, տար, տար, բայց լավ սրի, հա՛:

Հետո կկանգնեցնի գեղջիուհուն՝

— Ե՛յ, աղջի, աղջի, ո՞ւր եյիր գնացել:

— Ներքնատուն, պարոն, — ասում ե նա կանգնելով ե ձեռքը աչքերին բռնելով նայում ե պատուհանին, — ճաշի համար կաթ բերելու:

— Դեհ, գնա՛, գնա՛, — պատասխանում եր աչան, բայց զգուշ կաց կաթը չթափես: — Իսկ դու, Զախարկա, թոկից փախած, ելի ո՞ւր ես վազում, — բղավում եր նա հետո: — Յես քեզ ցույց կտամ վազելը: Յես տեսնում եմ, վոր գու արդեն յերրող անդամն ես վազում, հետ կորիք նախասենյակ:

Յեվ Զախարկեն գնում եր նախասենյակում նորից նիրհելու:

Կովերը գային դաշտից՝ ծերունին առաջինն եր, վոր հոգում եր նրանց ջրելու մասին: Պատուհանից տեսներ՝ վոր շունը հալածում ե

հավին, խսկույն խիստ միջոցներ ձեռք կառնեիր անկարգությունների դեմ:

Նրա կինն ել շատ զբաղված ե. նա յերկույերեք ժամ բացատրում ե դերձակ Ավերկային, թե ինչպես ամուսնու Փուֆայկից Իյուչկի համար բաճկոնակ դուրս բերի, ինքը գծում ե կավճով ե հսկում ե, վորպեսզի Ավերկան մահուղից չգողանա: Հետո կանցնի կանանց բաժինը, կպատվիրի ամեն մի աղջկան՝ վորքան հաշյա գործի մի որում. հետո կկանչի Նաստասյա Իվանովնային, կամ Ստեպանիդա Ազապովնային, կամ իր չքախմբից մի ուրիշին՝ իր հետ պոսսեյու գործնական նրպատակով, նայելու, թե ինչպես ե յգժում — հասունանում խնձորը, յերեկվա հասածն արդյոք վայր չի՞ ընկել, մի տեղ պատվաստել, մի տեղ հատել ե այլն...

Բայց գլխավոր հոգսը խոհանոցն ու ճաշն եր: Ճաշի մասին ամբողջ տունն եր խորհրդակցում, գառամյալ մորաքույրն ել եր հրավիրվում խորհրդակցության: Ամեն մեկն առաջարկում եր իր խորտիկը՝ մեկը փորոտիքից սոււլ, մեկը լապշա, մեկը ստամոքս, մեկը բուրբի, վո՛րը կարմիր, վո՛րը սպիտակ հեղուկ սուուսի համար:

Ամեն խորհուրդ ի նկատի յեր առնվում, կշտադատվում, քննվում հանգամանորեն ե ապա ընդունվում, կամ մերժվում եր տան տիկնոջ վերջնական դատավճռով:

Անդադար խոհանոցն եյին ուղարկվում

մերթ Նաստասյա Պետրոսյան, մերթ Ստեպանիզա Իվանովյան հիշեցնելու, վոր այս ամբարանն, ա՛յն փոխեն, կերակուրների համար տանեն շաքար, մեղր, գինի և նայեն՝ արդ՞յո՞ք գործադրում է խոհարարը բոլոր ուղարկածը:

Արլոմովկայում առաջին և կենսական հոգսը կերակուրն էր: Ի՞նչ հորթեր էլին գերացնում տարեկան տոների համար: Ի՞նչ թռչուններ էլին սնուցանում: Վորքա՛ն նուրբ կշառափառումներ, վո՛րքան համություն և հոգատարություն նրանց խնամելու համար: Հնդկահավերն ու ձուտերը, վորոնք նշանակված էլին անվանակոչության և այլ հանդիսավոր օրերի համար՝ գերացվում էլին ընկույզով: Սագերին գրկում էլին գրոտանքից տոներից մի քանի օր առաջ հարկադրում էլին անշարժ կախված մնալ տոպրակի մեջ, վոր ճարպակալեն: Ի՞նչ պաշար կար այնտեղ մուրաբաների, աղածների, թխվածքների: Ի՞նչ մեղրի ոչարակներ, ի՞նչ կվասներ էլին յեփվում, ի՞նչ կարկանդակներ էլին թխվում Արլոմովկայում:

Յեվ այսպես մինչ կեսօր ամեն ինչ իրարանցման ու հոգսերի մեջ, ամեն ինչ ապրում էր այնպիսի լիակատար, մրջնային, այնպիսի նկատելի կյանքով:

Կիրակի և տոն օրերին ել դադար չունեին այդ աշխատանք մրջյունները: Դանակների թխթխկոցը խոհանոցում ուժեղանում և գտնում էր ամբողջ հաճախակի: Սպասավո-

րուհին մի քանի անգամ ճանապարհորդություն էր կատարում շտեմարանից խոհանոց ալյուրի և ձվի կրկնակի քանակությամբ, թռչնանոցում հառաչանքն ու արյունահեղությունը շատանում էր. թխում էլին վիթխարի կարկանդակ, վորն իրենք պարոնները յերկրորդ օրն ել էլին ուտում, յերրորդ և չորրորդ օրը մնացորդներն անցնում էլին կանանոցը: Կարկանդակն իր գոյությունը պահպանում էր մինչև ուրբաթ, այնպես վոր նրա միայն չոր կողքը, առանց վորևե միջուկի, իրև մի առանձին շնորհ, հասնում էր Անտիպին, վորը յերեսը խաչակնքելով, ճոճոցով, սնվեհեթությամբ ավերում էր այդ հետաքրքրական կարծրությունը, բավականություն ստանալով ավելի այն գիտակցությունից, վոր աղայական կարկանդակ է ուտում, քան թե բուն կարկանդակից, վորպես հնագետը հաճույքով խմում է անպիտան գինին վորևե հաղարամյա խեցատից:

Իսկ յերեսան, իր մանկական ամեն ինչ նկատող խելքով շարունակ նայում ու դիտում էր: Նա աեսնում էր, թե ինչպես ոգտակար և հոգսալից առավոտին հաջորդում էլին կեսօրը և ճաշը:

Կեսօրին շոգ է. վոչ մի ամպիկ յերկնքի յերեսին. արևն անշարժ կանգնած է գլխավերևում և խանձում է խոտը: Ոգի հոսանքը դադարել է: Վո՛չ ծառի, վոչ ջրի խռոց. գյուղի և դաշտի վրա տարածված է անվրդով խաղա-

դուժյուն—ամեն ինչ կարծես մեռած լինի:  
Այս ամայության մեջ մարդկային ճայնը գլխի  
ու հեռու յետարածվում: Բզեզի թռիչքն ու  
բզզոցը լսվում է քսան սատեն տարածությունից  
և խիտ խոտերի մեջ լսվում է ինչ—վոր  
խոմփոց, կարծես՝ մեկն այնտեղ ընկել ու  
ընել է քաղցր քնով:

Տանն ել տիրեց մեռելային լուսթյուն:  
Հասավ ճաշից հետո քնելու ընդհանուր ժամը:  
Յերեխան տեսնում է, վոր հայրը, մայրը,  
պառավ մորաքույրը, շքախումբը—բոլորը  
ցրվեցին իրենց անկյունները:

Իսկ ով անկյուն չուներ՝ գնում էր խոտա-  
նոց, մյուսը՝ այգի, յերրորդը գոժություն էր  
վորոնում սրահում, վորն էլ, թաշկինակով  
գեմքը ճանձերից ծածկելով, քնում էր տեղ-  
նուտեղը, վորտեղ շոգը նրան թուլացրել և ծա-  
նրը ճաշը գեանովն էր սվել: Այգեպանն էլ ճրգ-  
վեց թփի տակ այգում, իր հերկի մոտ, կառա-  
պանն էլ քնեց գոմում:

Իլյա Իլիչը նայեց սպասավորների սեն-  
յակը, այնտեղ բոլորը պառկոտած էլին՝ վորը  
յերկար նստարանների, վորը հաւաակի վրա,  
վորը սրահում. իրենց գլխու թողած յերեխա-  
ները սողում էին բակում և փորում ավազը:  
Շներն էլ քաշվել էին ընդերի խորքը. ասենք՝  
մարդ էլ չկար, վոր վրան հաջեյին:

Կարելի չէր ամբողջ տունը անցնել ծայրե-  
ի ծայր և վոչ մի հոգու չհանդիպել. հեշտ էր  
ամեն ինչ թոր—թոփ անել և սայլերով տանել

բակից. վոչ վոք չէր խանգարի, յեթե միայն  
գողեր լինեյին այդ կողմերում:

Սա մի ամեն ինչ կլանող, անհաղթելի քուն  
էր, իսկական մահվան պես մի բան: Ամեն ինչ  
մեռած է. միայն բոլոր անկյուններից լսվում  
է պես—պես խոմփոց՝ ամեն յեկեվեջի ու ներ-  
գաշնակության:

Յերբեմն մեկը քնասեղից հանկարծ բարձ-  
րացնում է գլուխը, անմիտ կերպով, զարմա-  
ցած նայում է այս ու այն կողմը և շուտ գալիս  
մյուս կողքի վրա, կամ՝ առանց աչքերը բա-  
նալու, քնակոլով թքում է և չթնոնքները  
չփչփացնելով, կամ քթի տակին ինչ—վոր փրնթ-  
փնթալով՝ նորից քնում:

Մի ուրիշը արագ, առանց նախապատրաս-  
տության, յերկու վտարով դուրս է թռչում  
անկողնից, կարծես՝ վախենալով կարցնել  
թանգագին բոպենները, վերցնում դավաթով  
կվասը, և փչելով նրա յերեսին լողացող ճան-  
ձերին, վոր նրանք անցնեն մյուս կողմը, վո-  
րից՝ մինչ այդ հանգիստ ճանձերն սկսում  
են սաստիկ շարժվել, հուսալով մի քիչ լավաց-  
նել իրենց գրությունը, թրջում է կոկորդը և  
ապա գնդակահարվածի պես նորից ընկնում է  
անկողնու վրա:

Իսկ մանուկը շարունակ գիտում էր ու դի-  
տում:

Ճաշից հետո նա դայակի հետ նորից դուրս  
էր գալիս: Բայց դայակը, չնայելով տիրուհու  
խիտ պատվերին և իր սեփական կամքին՝ չէր

կարողանում դիմադրել քնի հմայքին: Նա յեւ վարակվում եր Աբրամովկայում տիրապետող այդ համաճարակով:

Սկզբում նա աչալուրջ հսկում եր մանկան. չէր թողնում իրենից հեռանա, նրա կայտառ խողերի վրա խիստ փնթփնթում եր, հետո՝ գգալով մտաւրւտ վարակման նշանները, սկսում եր խնդրել, վոր դուրս չգնա բակի դռնից, ձեռք չտա այծին, չմագլցի աղալնոց կամ գալերեյա:

Ինքը նստում եր վոեե հով տեղում — սպարչամբում, ներքնատան շեմքին, կամ ուղղակի խոտերի վրա, ըստ յերեվույթին գուլպա գործելու, կամ յերեխային հսկելու համար: Բայց շուտով նրան սաստում եր թուլացած գլխի շարժումներով:

— Կբարձրանա, ա՛խ, մեկ ել տեսար կբարձրանա այդ հողը գալերեյան, — մտածում եր նա համարյա կիսաքուն, — կամ... գուցե և ձորակը:

Այստեղ պատալի գլուխը թեքվում եր դեպի ծնկները, գուլպան ընկնում եր ձեռքից. նա մանուկին աչքաթող եր անում և կիտաբաց բերանով սկսում հանդարտ խամփալ:

Յերեխան անհամբերությամբ սպասում եր այս վայրկյանին, վորից սկսվում եր նրա անկախ կյանքը:

Նա կարծես մենակ եւ ամբողջ աշխարհում. վտարերի ծայրերի վրա հեռանում եր գայակից, տնտղում և բուրբին՝ ով վորտեղ և քնած:

կանգ և տանում, աչքերը հառած նայում՝ ինչպես մեկը սթափվում, թրում և և յերազում վոր մրթմրթում: Հետո սիրտը թրթռալով բարձրանում և գալերեյան, պտույտ և գործում ճանչացող տախտակների վրայով, մագլցում և աղալնանոց, մտնում և այգու խորքերը, ալանջ և դնում բզեզի բզբոցին և դիտում հեռու ողում նրա թռիչքը: Ականջ և դնում՝ ինչպես մեկն անդադար ճկճկում և խոտերի մեջ. վորտնում և գտնում և այդ անդորբությունը խանգարողներին, անում և ճպուռին, պոկում թեփերը և նայում, թե ինչ կլինի. կամ նրա մարմնի մեջ ծղնտո և խրում և հետեյում, թե նա ինչպես և թռչում այդ հովելումով: Բավականությամբ, շունչը պահած դիտում և սարդին, թե ինչպես և ծծում բռնած ճանճի արյունը, ինչպես խեղճ զոհը դես ու դեն և ընկնում և բզբում նրա ճանկերում: Յերեխան բանը վերջացնում և նրանով, վոր սպանում և թե՛ զոհին, թե՛ տանջողին:

Այնուհետեւ նա մտնում և աջիւր, վոր վորում, գտնում և ինչ-վոր արմատներ, մաքրում և կլեպը և մեծ բավականությամբ ուտում, գերազասելով մոր ախած խնձորներից և բողբոջներից:

Բակից ել դուրս և վազում. կուզենար կեչուտն ել գնալ. նա այնքան մոտ և յերեվում, վոր հինգ բույսերում կհասներ, վոչ թե պտույտ տալով, ճամփով, այլ ուղիղ արխի, ցանկապատի և փոսերի վրայով: Բայց վախենում և՛

այնտեղ, ասում են՝ և՛ շարքեր, և՛ ավազակ-  
ներ, և՛ սարսափելի դադաններ կան:

Նա ուզում է դեպի ձորակն ել վազ տալ.  
այդուց միայն մտա հիսուն սաժեն է հեռավո-  
րությունը. մանուկն արդեն հասել է յեզրին,  
կուչ է ամում աչքերը, ուզում է նայել վորպես  
խառնարանի... Բայց հանկարծ նրա միան են  
ընկնում բոլոր ասեկոսներն ու ավանդու-  
թյուններն այդ ձորակի մասին: Սարսափը  
է փախչում և յերկյուզից դողալով վազում է  
յոիրում և նրան, վոչ մեռած վոչ կենդանի, յետ  
դեպի դայակը և արթնացնում նրան:

Կայակը մեր թռավ քնից, ուղղեց գլխի  
թաշկինակը, մատով նրա տակ հավաքեց ըս-  
պիտակ մազերի փնջերը և ձեռնացնելով, թե-  
խակի ել քնած չի յեղել, կասկածելով նայեց իւ-  
րուշկին, ոտքս աղայի լուսամուտին և գողգո-  
ջուն մատներով սկսեց ծնկների վրա ընկած  
գուլպայի ճաղերը ըզել:

Այնինչ շոգն սկսեց կամաց-կամաց թու-  
լանալ. բնության մեջ ամեն ինչ սկսեց կենդա-  
նանալ. արեւն արդեն մոտեցել էր անառոին:

Տանն ել քեշ-քեշ վրդովվում եր խողա-  
ղությունը. ինչ-վոր տեղ դուռը ճոռայ-  
բակում վոտնաձայն լսվեց, խոտանոցում փը-  
ռչտացին:

Ծառան՝ ծանրությունից կղացած, արա-  
գությամբ տարավ ահադին ինքնայեռը: Ըսիլը-  
սեցին հավաքվել թեյի: Վորի գեմքն է ճմըր-  
թած ու աչքերն արտասովակալած, վո՛րի այ-

տին ու քունքին կարմրագուն թծեր են կաղ-  
մվել, վո՛րն ել քնակոլոլ խոտում է ոտարոտի  
ձայնով: Բոլորը փնջում են, ախ ու վախ քա-  
չում, հորանջում, գլուխը քորում, ճլմկոտում՝  
դժվարությամբ ուչքի դալով:

Ճաշն ու քունը առաջ էյին բերել անհազ  
ճարավ: Ծարավն այրում է կոկորդը, սոմեն  
մեկը խմում է ատա-ատսերկու բաժակ թեյ,  
բայց այդ չի ոգնում. լսվում է ախ ու վախ,  
հառաչանք. դիմում են հապալատու, տանձի  
ոչարակի, կիտաի ողնությանը, վոմանք ել  
նույնիսկ բժշկական միջոցների՝ կոկորդի յե-  
բաչտը թրջելու համար:

Բոլորն ել ճարավից փրկություն են վո-  
րոնում, վորպես մի աստիածային պատուհա-  
սից: Բոլորը դես ու դեն են ընկնում, վորպես  
ճամփորդների քարափան Արարիկայի անապա-  
տում, վոր աղբյուր չի գանում վոչ մի տեղ:

Յերեսխան այստեղ է, մայրիկի մտ. նա  
նայում է չրջապատող տարորինակ դեմքերին,  
ակամջ դնում նրանց քնաթաթախ ու ալարկոտ  
խոսակցությանը: Հաճելի չե նրանց նայելը.  
նրանց ասած ամեն մի անմտություն հետա-  
քրքրական է թվում նրան:

Թեյից հետո բոլորն ել դրազվում են վո-  
րեվե բանով. մեկը գնում է դեռափ և հանդարտ  
թափառում, վոտքով քարերը հրելով ջրի մեջ:  
Մյուսը նստում է պատուհանի մոտ և հայաց-  
քով կրանում ամեն մի մոտանց յերեվույթ.  
կատու անցնի բակով, թե ճայեկը ողով՝ դե-

տողը թե՛ սրան, թե՛ նրան հետեւում ե հա-  
յացքով ու քթի ծայրով, գլուխը դարձնելով  
մերթ աջ, մերթ ձախ:

Այսպես յերբեմն, շները, արեւիկող արած՝  
սիրում են նստել պատուհանի առաջ ամբողջ  
սրերով և ուշի-ուշով գլխով ամեն անցնողի:

Մայրը իլյուշի գլուխը դնում և ծնկներին  
և կամաց սանրում և մաղերը, հիանալով նը-  
րանց քնքշութեամբ: Հարկազրում և հիանալ  
և՛ նաստասյա ի վանովնային, և՛ Ստեպանիզա  
Տիխանովնային, զրուցում և նրանց հետ իլյու-  
շի ապագայի մասին, նրան դարձնում և իր  
հնարած վորելի փայլուն գյուցազներգության  
հերոս: Նրանք իլյուշին վոսկե սարեր են գու-  
շակում:

Բայց ահա սկսում և մթնել: Մոհանոցում  
ճրթճրթում և կրակը նորից լսվում և դանակ-  
ների կակտոցը—ընթրիք և պատրաստվում:

Ծառաները հավաքվել են բակի դռան  
մոտ. հնչում և բալալայկան, լսվում և հըր-  
հրոց: Ծառաները դարելիք յեն խաղում:

Իսկ արեւին արդեն իջնում և քանառի  
յետեվը նա արձակում և մի քանի հնչին առ-  
քություն ունեցող ճառագայթներ, վորոնք  
բոցեղեն շերտով թափանցում եյին ամբողջ  
անասուր, վոսկեզոծելով մայրիկների կատար-  
ները:

Այնուհետեւ ճառագայթները մարում և-  
ին մեկը մյուսի յետեվից. վերջին ճառագայ-  
թը մնում և յերկար. նա բարակ ստեղի նման

խրվել և ք տերեւների խառնթյան մեջ. բայց  
նա յեւ հանգավ:

Առարկաները կորցնում եյին իրենց ձեւը.  
ամեն ինչ ձուլվում, նախ դառնում և ք զորշ,  
ապա մթին զանգված. թռչունների յերգն առ-  
տիճանարար թուլանում և ք չուսով նրանք  
բոյորովին լռեցին, բացի ինչ-վոր կամակո-  
րէց, վորը, կարծես մյուսների ջիգրու. հա-  
մառարած լուծթյան մեջ, քնդհատումներով,  
միալար ձկնկում և ք: Բայց նա յեւ, վերջապես,  
սկսեց կամաց-կամաց դադարել, շփացրեց վեր-  
ջին սնգամ, թափահարեց՝ չարթելով կամաց  
տերեւներն իր շուրջը նայեց... և քնեց:

Ամեն ինչ լռեց: Միայն ծղրիղների ձրկ-  
ձրկոցը դնարով ուժեղանում և ք: Փեանից բարձ-  
րացավ սպիտակ գոլորշի և փովեց մարդա-  
դեանի և գետի վրա: Փեան եւ հանդարտվեց.  
քիչ անց նրա մեջ եւ մեկը շլլպպայրեց վերջին  
սնգամ և նա անչարժացավ:

Չգացվեց խոնավություն: Քանի գնում,  
մթնում և ք: Ծառերի համախմբումները հրե-  
չային կերպարանք ստացան: Անասուր յեր-  
կյուղայի դարձավ: Այնտեղ հանկարծ մեկը  
ձոնչացնում և, կարծես թե հրեշներեց մեկը  
տեղափոխվելիս՝ վոտների տակ ջարդելիս յե-  
նի չոր ճյուղերը:

Յերկնքում կենդանի աչքի նման վառ  
պապուց սառձին աստղը. տան պատուհաննե-  
րում պլպլացին կրակները:

Հատան բնության քնդհատուր հանգիստավոր

անդորրութեան բողոքները, բողոքներ՝ յերբ  
ստեղծադործող խելքը աշխատում է ավելի  
թափով, յերբ ավելի տապով յեռում են բա-  
նաստեղծական խոհերը, յերբ սրտի մեջ կիրքը  
բանկում է ավելի աշխույժ, կամ թախիծը նը-  
վում ավելի ցավազին, յերբ վայրազ հոգու  
մեջ հանցավոր մաքի հատիկն սկսում է ավելի  
անվրդով և ուժգին հասունանալ և յերբ... Աբ-  
լումով կայում բոլորը քնում են այնպես խոր,  
հանգի՛ստ:

— Գնանք, մայրիկ, գրոսները — ասում է  
Իլյուչան:

— Ի՞նչ ես ասում, աստված չանե: Հիմա  
գրոսներ՛, — պատասխանում է մայրը: — Խոնավ  
է, վոտիկներդ կմրսեցնես, և ահալի յե. այ-  
ժամ անառում քաջքեր են ման գալի, նրանք  
վորք յերեխաներին փախցնում են:

— Ո՞ւր են փախցնում. նրանք ի՞նչ տեսակ  
են, վո՞րտեղ են ապրում, — հարցնում է մանու-  
կը:

Յեւ մայրը ազատութիւն էր տալիս իր  
անգուռայ յերեմակայութեանը:

Մանուկն աչքերը բաց ու խուփ անելով՝  
լսում էր նրան, մինչեւ վոր, վերջապես, քու-  
նը նրան կթուլացներ բոլորովին: Գալիս էր  
դայակը և վերցնելով նրան մոր ծնկներից,  
քնաթաթախ՝ գլուխը իր ուսով կոխ՝ տանում  
էր անկողին:

— Ահա որն էլ անցավ, և փառք աստու-  
ծո, — ասում է յին արլումովցիք անկողին մտնե-

լով, տնքանքալով և յերեսներին խաչ հանե-  
լով. — հաջողակ ապրեցինք. եսալիսի տարուստ  
եղուց էլ տա աստված. փա՛ռք քեզ, տեր,  
փա՛ռք քեզ:

Այնուհետեւ Աբլումովը յերազում տեսավ  
այլ ժամանակ. նա ձմեռային անվերջ գիշերը  
յերկչոտութեամբ սղմվում է դայակին, իսկ  
սա փսփսալով պատմում է ինչ-վոր անծանոթ  
յերկրի մասին, վորտեղ վո՛չ գիշեր կա և վո՛չ  
ցուրտ, վորտեղ շարունակ հրաշքներ են կա-  
տարվում, վորտեղ մեղրի և կաթի գետեր են  
հոսում, վորտեղ կլոր տարին վոչ-վոք վոչինչ  
չի անում, այլ Իլյա Իլյիչի նման ջահել ջի-  
վաններ՝ գրոսնում են որնիրուն և այնպիսի  
ղեղեղեղուհիներ կան, վոր վոչ հեքյաթներում  
են յեղել, վոչ էլ գրչով կարելի յե նկարագրել:

Այնտեղ կա նաև մի բարի կախարդուհի,  
վոր մեզ մոտ յերբեմն հայտնվում է ձկան կեր-  
պարանքով, վորն իր համար ընտրում է վո-  
րեվե սիրելի՝ հանգարտ, անշառ, ուրիշ խոս-  
քով՝ վորեւե ծուլի, վորին բոլորը վիրավորում  
են, և առանց այլեայլութեան նրա գլխին խո-  
փում է դանազան բարիք, իսկ նա իր քեֆին  
ուտում է ու զուգվում սլատրաստի հագուստով  
և սուգա ամուսնանում է վորեվե չլսված գե-  
ղեղեղուհու: Միլիտրիսա Կիրիլիայեմնայի  
հետ:

Մանուկն ականջներն ու աչքերը սրած՝  
մեծ հետաքրքրութեամբ ականջ էր դնում  
պատմութեան:

Դայակը, կամ ամանդությունը այնպես վար պետք են խուսափում եյին պատմութեան մեջ. այն բոլորից, ինչ-վոր իսկապես գոյութեան ունի, վոր յերեվակայութեանն ու խելքը, ծծվելով հերյուրանքով՝ մինչեւ ծերութեան նրա ձեռքին ստրուկ եյին մնում: Դայակը բարեսրտութեամբ պատմում եր Յեմիլյա-հիմարի հեքյաթը, այս չար և նենդ յերգիծանքը մեր պապերի մասին, պուցե, նաև, մեր մասին ել:

Հասակն առած Իլյա Իւկիչը թեյեվ հետո ել իմանում ե, վոր մեղրի և կաթի գետեր չկան, չկան բարի կախարդներ, թեյեվ նա ժողիտով ծաղրում ե դայակի պատմիածքները, բայց այդ ժպիտն անկեղծ չե՝ նրան հետևում ե գաղտնի հառաչանքը, վորովհետեւ նրա մեջ հեքյաթը խոռոմել և կյանքին և նա, յերբեմն, անգիտակցօրեն վշտանում ե՝ թե ինչու հեքյաթը կյանք չե և կյանքը հեքյաթ չե:

Նա ակամա յերազում ե Միլիտրիսա կրքիբիտեվնայի մասին, նրան քաջում և շարունակ այն կողմը, վորտեղ միակ գործն զրոսնելն ե, վորտեղ հոգս ու վիշտ չկա, նրա մեջ ընդմիջտ մնում ե փեչի վրա պակեղու, պատրաստ, չաշխատած հագուստով ման գալու և բարի կախարդուհու հաշվին ուտելու հուկումը:

Թե՛ ծերունի Աբլոմովը, թե՛ պապը մասուկ հասակում լսել եյին նույն հեքյաթները, վորոնք դայակների և ծառանների բերանով,

դարերի և սերունդների միջով անցել եյին հնութեան ստեորոտիպ հրատարակութեամբ:

Այնինչ դայակը յերեխայի յերեվակայութեան առաջ արգեն այլ պատկեր ե նկարում:

Նա պատմում ե նրան մեր Աքիլլեաների և Ուլիսաների սխրագործութեանների մասին, Իլյա Մուրոմեցի, Դորբինյա Նիկիտիչի, Ալյոչա Պապովիչի հերոսութեանների մասին, Պոլկան-հսկայի մասին, Կարեչիչչե-անցորդի մասին, այն մասին՝ ինչպես նրանք թափառում եյին Ռուսիայում, կտորում եյին անհավատների անհամար հրոսակներ, մրցում եյին, թե ով մի շնչում կխմի մի գավաթ ողի ու դեմքը չի թթվեցնի. հետո խոսում եր չար ավազակների մասին, քնած իշխանուհու, քարացած քաղաքների և մարդկանց մասին: Վերջապես, անցնում եր մեր դեվարանութեան, մեռելներին ու հրեշներին և ալլակերպած մարդկանց:

Նա Հոմերոսի բարեսրտութեամբ և պարզութեամբ, մանրամասնութեանների նույն կենսաթրթիո հարազատութեամբ և պատկերների ցցունութեամբ, մանկական հիշողութեան և յերեվակայութեան մեջ մտցնում եր ուսուկյանքի Իլիականը, վոր ստեղծագործել եյին մեր հոմերականները այն մշուշոտ ժամանակների, յերբ մարդը դեռևս չէր հարմարվել բնութեան և կյանքի վտանդներին ու գաղտնիքներին, յերբ նա գողում եր և՛ ալլակերպու-



վածներէ, և՛ քաջքերի առաջ, և Սուրբ Պապո-  
վիչի մոտ եր վորոնում իրեն շրջապատող վը-  
տանգներից պաշտպանութուն, յերբ և՛ ո-  
ղում, և՛ ջրում, և՛ անտառում, և՛ դաշտում  
թագավորում եյին հրաշքները:

Սարսափելի և անհաստատ եր այն ժամա-  
նակվա մարդու կյանքը. դռան շեմքից դուրս  
զալը վտանգավոր եր նրա համար. նրան՝ մեկ  
եւ անբար, գազանը կպատառոտի, ավազակը  
կմորթի, ամեն ինչ չար թաթարը կխլի, կամ  
մարդ անուր կկորչի, առանց վորեվե հետքի:

Մեկ մեկ եւ հանկարծ յերկնքի ցուցանք-  
ներ կերևան՝ կրակե սյուներ ու գնդեր. կամ  
թե թարմ գերեզմանի վրա կրակ կբռնկի,  
կամ անտառում ինչ-վոր մեկը զբոսնում ե,  
կասես լապտերով, սարսափելի հրհռում ե և  
մթության մեջ աչքերը պսպղացնում:

Մարդու հետ եւ շատ անհասկանալի բա-  
ներ եյին կատարվում. ապրում-ապրում ե մար-  
դը յերևար և լավ—վոչինչ, բայց հանկարծ կըս-  
կսի գլխիցը դուրս տալ, կամ կսկսի ոտարոտի  
ձայնով բղավել, կամ գիշերները քնած թափա-  
ռել. մի ուրիշը հանկարծ կսկսի կծկվել յեւ  
զետնովը զարկվել: Իսկ այս բոլորը կատար-  
վելուց առաջ՝ հենց նոր հավը կանչեց աքա-  
ղաղի նման և ազուավը կռկոաց կտրանը:

Սարսափով շրջահայելով, թույլ մարդը  
կորցնում եր գլուխը և յերեվակայության  
մեջ վորոնում իրեն շրջապատող և իր սեփա-

կան բնության մեջ գտնվող գաղտնիքների բա-  
նալին:

Բայց, դուցե, քունը, թարչամած կյանքի  
մշտնջենական խոգազությունը և շարժողու-  
թյան ու ամեն մի իրական յերկյուզի, արկած-  
ների և վտանգների բացակայությունը հար-  
կադրում եյին մարդուն ստեղծել բնական աշ-  
խարհի մեջ մի ուրիշ անիրական աշխարհ, և  
նրա մեջ վորոնել պարապ յերեվակայության  
բավականությունը, կամ հանգամանքների սո-  
վորական կապակցության և յերեվոյթի  
սլաոճառների լուծումը— բուն յեկվոյթից  
դուրս:

Թարխափելով եյին ապրում մեր խեղճ  
նախահայրերը: չեյին թեվավորում և չեյին  
զսպում նրանք իրենց կամքը և ապա միամտո-  
րեն դարմանում, կամ սարսափում եյին ան-  
հարմարությունից, չարից, և բնության համր  
ու մթին յերոզիֆներից եյին պատճառների  
մասին հարց ու վորճ անում:

Նրանց մոտ մահը պատահում եր այն բա-  
նից, վոր մեռելին տանից դուրս եյին բերում  
վոչ թե գլուխը, այլ վոտքերը դեպի առաջ, և  
հրդեհը նրանից՝ վոր շունը յերեք գիշեր վոր-  
նում եր պատուհանի առաջ, և նրանք աշխա-  
տում եյին, վորպեսզի հանգուցյալին վտանքը  
դեպի առաջ դուրս բերեն դոնից, իսկ ուտում  
եյին նույնը, նույնքան և առաջվա նման քնում  
եյին մերկ խոտի վրա. վոճնացող շանը ծեծում  
եյին կամ քշում բակից, իսկ մարխի կայծերը

բայց յեվ այնպես գցում էյին փտած հատակի  
ձեղքերի մեջ:

Ինչ աշխատել ունեւ մարդը՝ նրան շրջապա-  
տող խիստ, հերձուրանքից զրկված իրակա-  
նության մեջ, սիրում է հավատալ հնի հրա-  
պուրիչ ավանդություններին և դեռևս գուցե  
յերկար ժամանակ չի հրաժարվի այդ հավա-  
տից:

Լսելով դայակից հեքյաթներ մեր վոսկե-  
պեղմի—Չմուտ—դուշի մասին, կախարդական  
ամբոցի արգելանքների ու դադտնարանների  
մասին, մանուկը կամ արիանում եր, յերեվա-  
կայելով իրեն սիրագործության հերոս և նրա  
մեջքով սարսուռ եր անցնում, կամ տանջվում  
եր քաջի անհաջողությունների համար:

Պատմությունները հետեւում էյին մեկը  
մյուսին: Իսկապէս պատմում եր ավյունով,  
դեղարմեատորեն, հրապուրիչ, տեղ-տեղ ներ-  
շնչված, վորովհետեւ ինքն ել կիսով չափ հա-  
վատում եր պատմություններին: Պատմի աշ-  
քերն առկայծում էյին կրակով, գլուխը դո-  
ղում եր հուզմունքից, ձայնը բարձրանում եր  
անսովոր նոտաների:

Մանուկը անծանոթ սարսափով բռնված՝  
արտասուքն աչքերին սեղմվում եր նրան:

Խոսքը լիներ մեռելների մասին, վորոնք  
կես գիշերին դուրս են դալիս գերեզմաններից,  
կամ թէ հրեշի մոտ գերության մեջ տանջվող  
զոհերի մասին, կամ փայտե վոտքով արջի մա-  
սին, վորը ման է դալիս ավաններում ու դյու-

դերում՝ վորոնելու իր կտրած բնական վոտ-  
քը—մանուկի մագերը սարսափից ճարճատում  
էյին գլխին. մանկական յերեվակայությունը  
կամ սառչում, կամ յեռում եր. նա գգում եր  
տանջող, քաղցր—հիվանդագին պրոցես, ներ-  
վերը ձգվում էյին լարերի նման:

Յերը դայակը մոայլ կերպով կրկնում եր  
արջի խոսքերը՝ «ճոնչա՛, ճոնչա՛, լորենի  
վոտք, յես ավաններով եմ անցել, գյուղերով  
եմ անցել, բոլոր կանայք քնած են, մի կին  
քնած չէ, իմ մորթու վրա յես նստած, իմ միսն  
է յեփում, իմ բուրգն է մանում» և այլն, յերբ  
արջը վերջապես մտնում եր խրճիթ և պա-  
րասովում բռնել իր վոտքը հափշտակողին՝  
մանուկը չէր դիմանում. նա դողալով, ծղրտո-  
ցով ընկնում եր դայակի ձեռքերին. նրա աշ-  
քերից ցայտում էյին յերկյուղի արցունքներ և  
միաժամանակ հրհուում եր ուրախությունից,  
վոր ինքը դազանի ճիրանների մեջ չէ, այլ փոփ  
վրա, դայակի կողքին:

Տղայի յերեվակայությունը լցվել եր տա-  
րորինակ ուրվականներով. ահն ու թախիծը  
բուն էյին դրել նրա հոգու մեջ յերկար ժամա-  
նակով, գուցե և ընդմիշտ: Նա տխրությամբ  
իր շուրջն է նայում և շարունակ կյանքի մեջ  
տեսնում է վնաս, աղետ. յերազում է այն կա-  
խարդական յերկրի մասին, վորտեղ չկա չա-  
րություն, հոգս, արամություն, վորտեղ ապ-  
րում է Միլիտրիստ կիրիբիայեփնան, վորտեղ  
այնպես լավ կերակրում և հազցնում են ճրի:

Հեքյաթն Արլամովկայում վո՛չ միայն յե-  
րեխաների, այլ և հասակավորների վրա մին-  
չեվ կյանքի վերջը պահպանում և իր իշխանու-  
թյունը: Բոլորը թե՛ տանը և թե՛ դյուղում,  
սկսած աղայից, նրա կնոջից, մինչև վանդու-  
կազմ դարբին Տարասը, մութ յերեկոյին ինչ-  
վոր բանից դողում են, ամեն մի ծառ այն ժա-  
մանակ փոխվում և հսկայի, ամեն մի թուփ՝  
ավազակային վորջի:

Պատուհանի փեղկի թխկոցը, քամու վառ-  
նոցը ծխնելույզում գունաթափ ելին անում և  
տղամարդկանց, և կանանց, և յերեխաներին:  
Ջրորհնեքին, յերեկոյան ժամը տասից հետո,  
վոչ-վոր դուրս չի գա բակի դռնից. ամեն մեկը  
Չատկվա գիշերը չի գնա գոմը, վախենալով,  
վոր այնտեղ տնային վողու կհանդէպի:

Արլամովկայում հավատում ելին ամեն  
ինչի՛ և՛ այլակերպվածներին, և՛ մեռելներին:  
Յեթե պատմեն, թե խոտի գեղը ման եր գալիս  
դաշտում—նրանք սասնց տարակուսելու կհա-  
վատան. յեթե մեկը լուր բաց թողնի, թե սա  
վոչխար չե, այլ ինչ-վոր ուրիշ բան, կամ այս  
ինչ Մարթան, կամ Ստեպանիգան վհուկ և,  
նրանք կհիսն վախենալ և՛ վոչխարից, և՛ Մար-  
թայից. նրանց գլխում միտք ել չի ծաղի հարց-  
նել՝ ինչու վոչխարը դարձավ վո՛չ վոչխար,  
իսկ Մարթան դարձավ վհուկ, և դեռ կհար-  
ձակվեյին ել նրա վրա, ով կփորձեր տարա-  
կուսել— այսքան ուժեղ և Արլամովկայում հա-  
վառը գեպի հրաչքը:

Իլյա Իլյիչը հետո կտեսնի յեւ, վոր աչ-  
խարհը պարզ և կառուցված, վոր մեռելները  
գերեզմաններից դուրս չեն գալիս, վոր հսկա-  
ներին, հենց վոր յերեվան գան, իսկույն բա-  
լագան են դնում, իսկ ավազակներին—բանա:  
Իայց յեթե կորչում և բուն հավատը գեպի ուր-  
վականները՝ այն ժամանակ մնում և յերկյու-  
ղի և անհաշիվ թախիծի մի ինչ-վոր տականք:

Իլյա Իլյիչն իմացավ, վոր հրեշներից  
դժբախտություն չկա, իսկ յեթե կա յեւ, հա-  
ցիվ գիտե, և ամեն քայլափոխում շարունակ  
ինչ-վոր սարսափելի բան և սպասում և վախե-  
նում և: Յեվ դեռ այժմ ել մութ սենյակում  
մնալիս, կամ մեռել տեսնելիս՝ նա դողում և  
մանուկ հասակում հողու մեջ ընկած չարա-  
գուշակ թախիծից: Առավոտյան ծիծաղելով  
իր վախի վրա, նա նորից գունատվում և յե-  
րեկոյան:

Այնուհետեվ Իլյա Իլյիչը հանկարծ տե-  
սավ իրեն տասներեք-տասնչորս տարեկան  
հասակում:

Նա արդեն սովորում եր վերիլեովո գյու-  
ղում, Արլամովկից մոտ հինը վերսա հետո,  
այնտեղի կառավարիչ գերմանացի Ետուլյի  
մոտ, վոր շրջակայքի ազնվականների յերե-  
խաների համար հիմնել եր մի փոքրիկ պան-  
սին:

Նա մի վորդի ուներ Անդրեյ անունով, հա-  
մարյա Արլամովին հասակակից. նրան ավել  
եյին ելի մի տղա, վորը յերբեք համարյա չեր

սովորում, այլ ավելի տառապում եր գեղձախ-  
տով, ամբողջ մանկութունն անցնում եր շա-  
րունակ փաթաթած աչքերով կամ ականջնե-  
րով և մշտապես կամացուկ լալիս եր նրա հա-  
մար, վոր տառի մոտ չի ապրում, այլ ոտար  
տան, շարագործների մեջ և իրեն փայփայող  
չկա և վոչ փոք իր սիրած կարկանդակը չի թխի-  
բացի այս յերեխաներից՝ ուրիշները դեռ  
չկային պանսիոնում:

Ճար չկար, հայրն ու մայրը յերես տված  
իլյուշի ձեռքը գիրք ավին: Ե՛լ արդասուք,  
ե՛լ հեծկլտանք ու քմահաճույք: Վերջապես  
տարան:

Գերմանացին բանիմաց ու խիստ մարդ  
էր, ինչպես համարյա բոլոր գերմանացիք:  
Գուցե իլյուշան կարողանար նրա մոտ վորևէ  
լավ բան սովորել, յեթե Աբրամովիան հինգ-  
հարյուր վերստաչափ հետո լիներ Վերխիտ-  
փոյից: Դե, արի ու սովորի: Աբրամովյան  
միջնորդարտի հմայքը, կյանքի և սովորույթնե-  
րի յեզանակը տարածվում եր և Վերխիտովոյի  
վրա. չե՞ վոր նա յել մի ժամանակ Աբրամով-  
կա յե յեղել: Այնտեղ բացի Շտոլցի տնից՝ ա-  
մեն ինչ չնչում եր նույն նախադարյան ծուլու-  
թյունը, բարքերի պարզությունը, անգորբու-  
թյունն ու անշարժությունը:

Մանուկի խելքն ու սիրտը լցվել է յին  
այդ կենցաղի բոլոր պատկերներով, տեսու-  
բաններով, բարքերով՝ նախ քան նա կտեսներ  
տառալին գիրքը: Յեվ ո՞վ գիտե, վորքան

չուտ և սկսվում մանկան ուղեղում մտավոր  
հատիկի զարգացումը: Ի՞նչպես հետամտես  
մանկան հոգու մեջ ծնվող տառալին հասկա-  
յողությունների և տպավորությունների ծա-  
ղումը:

Գուցե, յերբ յերեխան դեռես հաղիվ բա-  
ներ եր արտասանում, կամ, գուցե, դեռ բոլոր-  
բովին չեր արտասանում, մինչև անգամ դեռ  
ման չեր դալիս, այլ միայն ամեն ինչի նայում  
էր այն սեեսած, համբ մանկական հայացքով,  
վորը հասակավորները բռն թե անվանում՝  
նա արդեն տեսնում ու հասկանում եր իրեն չըր-  
ջապատող միջավայրի յերեւույթների կապը,  
բայց միայն այդ բանը չեր խոստովանում վոչ  
իրեն և վոչ ուրիշներին:

Գուցե իլյուշան արդեն վաղուց նկատում  
յեվ հասկանում է, թե ի՞նչ են խոսում յեվ ա-  
նում նրա մոտ. ինչպես նրա հայրիկը պլիսե  
անդրավարտիկով և կինամոնադույն մահուղե  
բամբակի զրած՝ անկյունից անկյուն և անց-  
նում, քթախոտ և քաշում և խնչում, իսկ մայ-  
րիկը սուրճից անցնում է թեյի և թեյից ճաշի,  
վոր ծնողը մարտին էլ չի անցկացնի ստուգել,  
թե քանի տեղ և հնձած և պատժի՞ դանցատու-  
թյան համար, բայց, հապա, փորձիր նրան  
ուշ տալ թաշկինակը՝ ազգապակ կբարձրացնի  
անկարգությունների համար և ամբողջ տունը  
գլխիվայր չուս կտա:

Գուցե նրա մանկական միտքը վաղուց

վճռել է, վոր այսպես, այլ վո՛չ ուրիշ կերպ  
պիտի ապրել, ինչպես ապրում են նրա շուրջը  
մեծահասակները: Յեւ ուրիշ ի՞նչ կերպ կը-  
հրամայեք նրան վճռել: Իսկ ի՞նչպես էյին  
ապրում Արլումովկայում մեծահասակները:

Հարց տալի՞ս էյին իրենց՝ ինչի համար է  
տրված կյանքը: Աստված գիտե: Յեւ ինչ-  
պե՞ս էյին սրատառխանում հարցին: Հավանո-  
րեն վոչ մի կերպ՝ այս բանը նրանց շատ հա-  
սարակ և պարզ եր թվում:

Նրանք չէյին ել լսել, այսպես կոչված,  
բազմաշխատ կյանքի մասին, այն մարդկանց  
մասին, վորոնք իրենց կրծքի մեջ կրում են  
մաշող հոգսեր, վորոնք յերկրի յերեսին չղե-  
տես ինչի, անկյունից անկյուն են ընկնում, կամ  
կյանքը տալիս են մշտնջենական, անվերջա-  
նալի աշխատանքին:

Արլումովցիք չէյին հավատում նաև հո-  
գեկան խռովություններին. կյանք չէյին հա-  
մարում ինչ վոր տեղ, ինչ վոր բանի ուղղված  
հավիտենական ճգումների շրջապտույտը.  
վախենում էյին, ինչպես կրակից, կրքերի  
հրապուլքից. և ինչպես ուրիշ տեղ մարդկանց  
մարմինը արագ այրվում եր ներքին հրաբը-  
խային աշխատանքից, հողեկան կրակից,  
այնպես արլումովցիների հոգին խողաղ, ան-  
արգել թաղվում եր փափուկ մարմնի մեջ:

Կյանքը նրանց, ինչպես ուրիշներին չեր  
խարանում վոչ վաղահաս կնճիռներով, վոչ

բարոյական քայքայիչ հարվածներով և հի-  
վանդություններով:

Բարի մարդիկ կյանքը հասկանում էյին  
վոչ այլ կերպ, քան իբրև իղեսալ հանգստի յեւ  
անդործության, վոր ժամանակ առ ժամանակ  
խախտվում եր զանազան անդուրեկան պատու-  
հարներով, ինչպես՝ ճիվանդություններով,  
վնասներով, գժտություններով և, իմիջի այ-  
լոց, աշխատանքով:

Նրանք աշխատանքը հանդուրժում էյին,  
վորպես պատիժ՝ դրված դեռևս մեր նախա-  
հայրերի վրա, բայց սիրել չէյին կարող և,  
յերբ հնարավոր եր լինում, միշտ նրանից ա-  
զատվում էյին, զտներով այդ հնարավոր և  
հարկավոր:

Նրանք յերբեք իրենց չէյին հուզում վոչ  
մի մշուշապատ բարոյական և մտավոր հար-  
ցերով. այս պատճառով միշտ ծաղկուն առող-  
ջություն և ուրախություն ունէյին, այս  
պատճառով այնտեղ յերկար էյին ապրում:  
Քառասնամյա տղամարդիկ նման էյին պա-  
տանիների, ծերերը ծանր, տանջող մահվան  
հետ չէյին պայքարում, այլ ապրելով մինչև  
անհնարինություն, կարծես թե մեռնում էյին  
գաղտագողի, հանդարտ սանելով և աննկա-  
տելի կերպով փչելով վերջին շունչը: Այս է  
պատճառը, վոր ասում են, թե առաջ մարդիկ  
դիմացկուն էյին:

Այո, իրոք վոր դիմացկուն. առաջ չէյին

չապում մանկանը հասկացներու կյանքի նշանակութունը և սխալաբանութունը նրան կյանքի համար, վորպես ինչ-վոր բարդ և բարձր բանի, չեյին տանջում նրան գրքերով, վորոնք գլխում ծնեցնում են անհամար հարցեր, իսկ հարցերը կրճում են միտքն ու սիրտը և կրճատում կյանքը:

Ծնողները նրանց ավել եյին կյանքի պատրաստ նորմա, իսկ սրանք նույնպես պատրաստ ընդունել եյին պոպոկից, իսկ պապը նախապապից՝ այդ նորմայի ամբողջութունը և անձեռնմխելիութունը, վորպես վետաայի կրակը պահպանելու ավանդով: Ինչպես ինչ որվում էր պապերի և հայրերի ժամանակ, այնպես արվում էր Իլյա Իլյիչին հոր որով. այնպես, գուցե, արվում է գեո հիմա յեւ Արլոմովկայում: Եւ ինչի՞ մասին նրանք պիտի մտածեյին և ինչո՞վ հուզվեյին, ի՞նչ խմորային, ի՞նչ նպատակները հետամտեյին:

Վոչինչ պետք չէ՝ կյանքը, վորպես հանգարա գեո, հոտում էր նրանց մոտից. նրանց մնում էր միայն նստել այդ գետի ափին և դիտել անխուսափելի յերևույթները, վորոնք հերթով, առանց կանչելու, կանգնում էյին նրանցից յուրաքանչյուրի առաջ:

Յեւ ահա քնած Իլյա Իլյիչի յերևակայության առաջ, նույնպես հերթով, վորպես կենդանի պատկերներ, սկսեցին բացվել նախ՝ կյանքի յերեք գլխավոր գործողութունները, վոր

խաղացվել են, ինչպես նրա ընտանիքում, այնպես էլ ազգականների և ծանոթների մոտ՝ ճնուկը, հարսանիքը, թաղումը:

Այնուհետև անցնում է խայտաճամուկ թափորը և նրա ուրախ ու տխուր ստորաբաժանումները՝ մկրտության, անվանակոչության, ընտանեկան տոների, բարեկենդանի, թաթախման, աղմկայի ճաշերի, աղակցական հավաքույթների, վողջույնների, շնորհավորութունների, պաշտոնական արաստութների և ժպիտների:

Ամեն ինչ կատարվում էր այնպե՛ս ճշգրբիտ, այնպե՛ս վայելչակերպ և հանդիսավոր:

Նրա առաջ պատկերանում էյին նույնիսկ ծանոթ անձեր և նրանց գեմքերի արտահայտութունը զանազան ծեսերի ժամանակ, նրանց հոգատարությունն ու նրանց անհանգստությունը: Տվեք նրանց վորպիսի փափուկ խնամախոսություն կուզեք, վորպի՞սի հանդիսավոր հարսանիք, կամ անվանակոչություն կուզեք—կկատարեն բոլոր կանոններով, առանց ամենափոքրիկ զանցառություն: Ում վորտեղ նստեցնել, ինչ և ինչպես հրամցնել, արարողության ժամանակ ո՞վ ում հետ գնա, պատշաճ նշանները պահպանել, այս բոլորի մեջ Արլոմովկայում վոչ վոք յերեք ամենափոքրիկ սխալ չէր կատարում:

Այնտեղ յերեխա խնամե՞լ չգիտեն: Մի նայե՛ցեք, ի՞նչպիսի վարդագույն և տոուզ

կուսիրդոններ են տանում, կամ ման ածում  
այնտեղի մայրերը: Նրանք ջանում են, վոր յե-  
րեխաները լինեն հասարակ, սպիտակ և առողջ:

Նրանք կհրաժարվեն պարնանից, նրան  
ճանաչել անգամ չեն ուզենա, յեթե գարնանա-  
մտին արտույտ չխորովեն: Ինչպես կարելի  
յե, վոր նրանք չզրիտենան և չկատարեն այդ:

Մրա մեջ է նրանց ամբողջ կյանքն ու դի-  
տությունը, այստեղ է նրանց բոլոր վշտերն ու  
ուրախությունները, այս պատճառով նրանք  
իրենցից հեռացնում են ամեն մի ուրիշ հոգս ու  
տրամություն և այլ ուրախություն չեն ճա-  
նաչում: Նրանց կյանքը լեզու լեցուն է բա-  
ցառապես այս արմատական և անխուսափելի  
անցքերով, վորոնք և անվերջ սնունդ են սու-  
լիս նրանց մարին ու սրտին:

Նրանք հուզմունքից թրթռացող սրտով  
սպասում էյին ծեսի, խնջույքի, արարողու-  
թյան և ապա՝ մկրտելուց, ամուսնացնելուց  
և մարդուն թաղելուց հետո մոռանում էյին  
և՛ մարդուն, և՛ նրա վիճակը, և ընկղմվում էյին  
սովորական անզգայության մեջ, վորից նրանց  
դուրս եր բերում նույնպիսի մի նոր դեպք՝  
անվանախոջություն, հարսանիք և այլն:

Չենց վոր յերեխան կծնվեր, ծնողների ա-  
ռաջին հոգան եր լինում, վորքան հնարավոր է  
ճշգրիտ, առանց ամենափոքրիկ զանազանու-  
թյան նրա վերաբերմամբ կատարել պահանջ-  
վող բոլոր պատշաճ ծեսերը, այսինքն՝ մկր-

տությունից հետո խնջույք տալ: Այնուհետև  
սկսվում եր նրա հոգատար խնամքը:

Մայրն իրեն և դայակին խպտակ եր դը-  
նում՝ սնել առողջ մանուկ, պաշտպանել նրան  
մրսելուց, չար աչքից և ուրիշ թշնամական  
հանգամանքներից: Յեռանդով հոգում էյին,  
վոր յերեխան միշտ ուրախ լինի և շատ ուտի:

Հագվիվ միայն վոտքի էյին կանգնեցնում  
իրիթին, այսինքն՝ յերբ դայակն այլևս պետք  
չէ, մոր սիրտը գանգաճի ցանկություն եր ներս  
սողոսկում՝ գտնել նրա համար բնկերուհի-  
վորքան կարելի յե առողջ և կարմիր:

Նորից կգա ծեսերի, խնջույքների և, փե-  
ջապես, հարսանիքի շրջանը. սրա վրա յե  
կենտրոնանում եր կյանքի ամբողջ պաթոսը:

Այնուհետև արդեն սկսվում էյին կրկնու-  
թյունները՝ յերեխաների ծնունդը, ծեսերը,  
խնջույքները, մինչև վոր թաղումները կվա-  
խեն զեկորացիաները. բայց վոր յերկար ժա-  
մանակով՝ վոմանք իրենց տեղը գիջում են  
ուրիշներին, մանուկները դառնում են պատա-  
նիներ և միաժամանակ փեսացուներ, ամուս-  
նանում են, իրենց նմաններին են արտադրում  
և այսպես, այս ծրագրով կյանքը ձգվում է  
անընդհատ, միանման հյուսվածքով, կտրվե-  
լով աննշմարելի կերպով գերեզմանի մոտ:

Ճիշտ է, յերբեմն նրանց վզին փաթաթ-  
վում էյին և այլ հոգսեր, բայց արլումովցիք  
մեծ մասամբ նրանց ընդունում էյին ստոյիկյան

անչարժությամբ և հոգսերը պատվելով նրանց՝  
զլխին, սրանում էյին կողքեց, ինչպես թրու-  
չաններ, վարոնք մոտ թուշելով հարթ պատին  
և տարատանելու տեղ չգտնելով, աւտը քարի  
մաս իրուր կթարտան թեերով և հետո կթրու-  
շեն:

Այսպես, սրինակ, մի անգամ տան մի  
կողմի գալերեյի մի մասը հանկարծ խորտակ-  
վեց և փլատակները տակ թաղեց թուխսին  
ձուտերի հետ. պիտի տուժեր և Անտիպի կին  
Ակսինյան, վորն ուզում էր նստել գալերեյի  
տակ մանելու, բայց այդ ժամանակ իր բախ-  
տից գնաց փուշ բերելու:

Տանը սոգմուկ բարձրացավ. մեծ ու փոքր  
բոլորը մոտ վազեցին և վարհուրեցին, յերեվա-  
կայելով, վոր թուխսի և ձուտերի փոխարեն  
այստեց կարող էր մանդալիս լինել ինքը խա-  
նումը իլյա իլյիշի հետ:

Բոլորն ախ քաշեցին և սկսեցին մեկը մյու-  
սին հանդիմանել, թե ինչպես վաղուց չեն  
մտածել՝ մեկը—հիշեցնի, մյուսը—հրամայի  
ուղղել և յերբորդը—նորույի:

Բոլորը զարմանում էյին, վոր գալերեյան  
փրվեց, իսկ նախորդ սրբ զարմանում էյին,  
թե վոնց էսքան յերկար ժամանակ կանգուն և  
մնում:

Սկսվեցին հոգս ու խոտակցություն, թե  
ինչպես ուղղեն բանը. ցավեցին թուխսի և  
ձուտերի համար և դանդաղ ցրվեցին իրենց

տները, խառնով արգելելով՝ չմտեցնել իլյա  
իլյիշին գալերեյին:

Այնուհետև մի յերեք շաբաթից հետո հրա-  
մայեցին Անդրյուշկին, Պետրուշկին, Վասիկին  
փրված տախտակները և ճաղերը հեռացնել դե-  
պի սրահը, վոր նրանք ճամփին թափված չը-  
լինեն: Այստեղ ընկած մնացին մինչև դարուն:

Ծերուկ Ամբուլովը ամեն անգամ, յերբ  
պատուհանից տեսնում էր նրանց, իսկույն  
հոգատարվում էր նորույելու մտքով. կանչում  
էր ատաղձագործին, սկսում էր խորհրդակ-  
ցել, թե ինչպես լավ կլինի անել՝ նոր գալե-  
րեյա շինել, թե՞ մնացածն էլ քանդել: Հետո  
տուն էր ուղարկում նրան, ասելով՝ «գնա բա-  
նիդ, իսկ յես դեռ կմտածեմ»:

Այսպես տեեց այնքան, մինչև վոր Վասի-  
կան թե Մոտիկան հազորդեց աղային, վոր ա-  
հա, յերբ ինքը Մոտիկան այս առափոտ մագրը-  
ցում էր գալերեյի մնացորդների վրա, ան-  
կյունները բոլորովին բաժանվեցին պատերից  
և մեկ էլ տեսար՝ նորից փրվեց:

Այն ժամանակ ատաղձագործին կանչեցին  
փերջնական խորհրդակցության, վորի հետև-  
վանքով վորոշվեց գալերեյի կանգուն մնացած  
կտորին առայժմ նեցուկ տալ հին փայտի կը-  
տորներով, վոր և արվեց նույն ամսի վերջին:

— Ե՛հ, կասես թե գալերեյան էլի նորի  
տեղ կձառայի, — ասաց ծերունին կնոջը. — տես,  
թե Ծեգոտը ի՛նչ գեղեցիկ և շարել գերաննե-  
րը, կարծես արդյականության պարողվիսի



տան սյունաշարքը լինի: Ա՛յ, հիմա լավ յե-  
ղավ, ելի յերկար կղբմանս:

Ինչ վոր մեկը հիշեցրեց նրան, թե իդեպ  
լավ կլինի ուղղել նաև դարպասը, նորոգել  
պատշգամբը, թե չե աստիճանների արանքով  
վոր միայն կատուները, այլև խոզերն են մըտ-  
նում նկուղը:

— Այո, այո, պետք է, — հոգատարութեամբ  
պատասխանում էր Իլյա Իվանովիչը և իսկույն  
գնում էր գննելու պատշգամբը:

— Իսկապես, տեսնում ե՞ս, թե ինչպես  
բոլորովին խախտվել է, — ասում էր նա՝ պա-  
տրիզամբը որորոցի նման ճոճելով:

— Դե, սա հենց նոր շինած ժամանակ ել  
չարժվում էր, — նկատեց մեկը:

— Ե՛հ, ի՛նչ կա վոր շարժվում էր. — պա-  
տասխանում էր Աբրամովը: — Աբրի տես, վոր չի  
փրվե՛լ, չնայած վոր աստիճեց տարի կանգնած  
է առանց ուղղելու: Են ժամանակ Լուկան հիա՛-  
նալի շինեց: Համա ի՛նչ աստղճագործ էր...  
Մեռավ, Աստվա՛ծ վողորձի հոգուն: Հիմա յե-  
րես են առել, ել-ենպես չեն շինի:

Յեվ նա աչքերը դարձնում էր ուրիշ կողմ,  
իսկ պատշգամբի սանդուխքը՝ ասում են,  
մինչև այժմ ել շարժվում է և դեռևս չի փրկ-  
վել:

Յերևում է, վոր իսկապես հիանալի յե յե-  
ղել այդ աստղճագործ Լուկան:

Պետք է, սակայն, արդարացի լինել տե-  
րերի վերաբերմամբ՝ — յերբեմն դժբախտու-

թյան, կամ գժվարության դեպքում նրանք  
չատ կանհանդստանան, մինչև անգամ կտա-  
րանան և կբարկանան:

Մի՞թե կարելի յե բարձիթող անել, կամ  
թողնել այս ու այն: Իսկույն պետք է միջոց-  
ներ ձեռք առնել: Յեվ խոսում են միայն այն  
մասին, ինչպես մի կերպ արխի կամուրջը  
կարկատեն, կամ ցանկապատեն այգին մի տե-  
ղից, վոր անասունները ծառերը չփշացնեն,  
վորովհետև ցանկապատի մի մասը բոլորովին  
պակած է գետնին:

Իլյա Իվանովիչը իր հոգատարությունը  
հասցրեց նույնիսկ մինչ այն, վոր մի անգամ  
այգով զբոսնելիս՝ տնքալով և ախ ու վախ ա-  
նելով, սեփական ձեռքերով բարձրացրեց ցան-  
կապատը և պարտիզպանին հրամայեց շուտով  
դեմ տալ յերկու զոլա: Աբրամովի այս հոգա-  
տարության շնորհիվ՝ ցանկապատը ամբողջ  
ամառն այսպես կանդուն մնաց և միայն ձմեռը  
ձյունը նրան նորից վայր դրեց:

Վերջապես բանը հասավ նույնիսկ այն  
տեղը, վոր իսկույն կամուրջի վրա յերեք նոր  
տախտակ դրին, հենց վոր Անտիպը ձիու և  
տակառի հետ միասին արխն քնկավ: Նրա ջարդ-  
վածքները դեռևս չեյին լավացել, բայց  
կամուրջն արդեն նորից շինված էր:

Ցանկապատի նոր անկումից հետո, այ-  
գում կովերի և այծերի բերանն էլ շատ բան  
չընկավ. նրանք կերան միայն հաղարձի թր-

փերը և սկսեցին կլպահան անել տասերորդ  
յորենին, իսկ խնձորենիներին չհասան եւ, վո-  
րովհետեւ կարգադրութեան դուրս յեկա՛վ,  
ինչպես հարկն է, կանգնեցնել ցանկապատը  
և մինչև անգամ յերկու կողմից արխ փորել:

Գործի վրա բռնված յերկու կողմն ու այծն  
եւ լավ տուժեցին՝ հիանալի դնգսեցին կողերը:

Իւյս Իւյիչը ելի տեսնում է յերազում ծնո-  
ղական տան մեծ, խաճար ընդունարանը, հը-  
նադարչան հացենի բազկաթոռներով, (վորոնք  
մշտապես ծածկոցների տակ են), — այնտեղ  
դրված են նաև ահագին, անշնորք և կոշտ գա-  
հալորակը պատած գունաթափ յերկնազույն  
կեղտոտ թավիչով և մեկ մեծ կաշվե բազկա-  
թոռ:

Գալիս է ձմեռային յերկար յերեկոն:

Մայրը ծալապատիկ նստած է զահաճո-  
րակի վրա և գանդաղ կերպով յերեխայի գուլ-  
պա յե դործում, մերթ ընդ մերթ հորանջում  
և մլով գլուխը քորում:

Նրա մոտ նստած են Նաստասյա Իվանով-  
նան և Պելլադեյա Իզնատյեվնան և ջթերը խրած  
աշխատանքի մեջ, Չանասիրութեամբ ինչ վոր  
կարում են տոնի առթիվ կամ Իւյսուչի, կամ նրա  
հոր, կամ իրենց համար:

Հայրը, ձեռքերը յեակը դրած, կատար-  
յալ բավականութեան մեջ, գնում-գալիս է  
սենյակում, կամ նստում բազկաթոռին և ջիչ  
նստած մնալով, սկսում է նորից ման գալ,

ուշադրութեամբ ականջ դնելով սեփական  
քայլերի ձայնին: Հետո ջթախոտ և քաշում,  
խնչում և նորից քաշում:

Սենյակում աղոտ կերպով վառվում է մի  
ձարպե մոմ, և այս թույլ եր արվում միայն  
ձմեռային և աշնան գիշերներին: Ամառացին  
ամիսներին բոլորն աշխատում ելին պառկել  
և վեր կենալ առանց մոմի, ցերեկվա լույսով:

Այս արվում էր մասամբ ըստ սովորու-  
թեան, մասամբ խնայողութեանից:

Սմեն մի իրի նկատմամբ, վոր տանը չէր  
որատաղրվում, այլ ձեռք եր բերվում գնու-  
մով՝ արլոմովցիք ծայր աստիճան ժլատ ելին:

Նրանք սրտարաց կերպով հյուրերի գա-  
լալանը կմորթեյին լավաղույն հեղիահալիք,  
կամ մի տանյակ ձուտ, բայց կերակրի մեջ մի  
ավելորդ չամիչ չէյին դնի և կզունաովեն,  
յերբ նույն հյուրը ինքնազլուխ կերպով իր  
բաժակը ինքը գինի ցնի:

Սակայն այսպիսի խայտառակութեան  
այնտեղ համարյա չէր պատահում. այսպիսի  
բան գուցե կանի փոքեկ թոկից փախածը, բնդ-  
հանուր կարծիքով՝ կորած մարդը. այսպիսի  
հյուրին բակն էլ չեն թողնի:

Չե, բարբերն այսպես չէյին այնտեղ.  
հյուրն այնտեղ, նախքան յեսակի հրավերը,  
վոչ մի բանի ձեռք ել չի տա: Նա շատ լավ գի-  
տի, վոր մի անգամ հրավիրելը հաճախ իր  
մեջ պարունակում է առաջարկված խորտիկից

կամ գինուց հրաժարվելու խնդիրը, քան նրա համը տեսնելը:

Ամեն մեկի համար ել չեն վառի յերկու մոմ. մոմը գնվում եր քաղաքում փողով և, ինչպես բոլոր գնած իրերը, պահվում եր իրա տանտիրուհու փակի տակ: Կիսայրված մոմերի մնացորդները խնամքով համարվում և պահվում եյին:

Առհասարակ այնտեղ փող ծախսել չեյին սիրում, և ստարկան վորքան ել անհրաժեշտ լիներ, նրա համար փողը մեծ ախոստանքով եր տրվում, այն ել այն դեպքում, յերբ ծախոն աննշան եր: Իսկ խոշոր ծախսերին ուղեկցում եյին հառաչանքներ, հեծկլտանքներ ու հայհոյանք:

Ամբրոմովցիք ավելի լավ եյին համարում տանել ամեն մի անհարմարություն, մինչև անգամ սովորել եյին նրանց անհարմարություն չհամարել, քան փող ծախսել:

Այս ե պատճառը, վոր բնդունարանի դահափորակը շատ վաղուց ամբողջովին ծածկված ե բծերով, սրանից ե, վոր Իլյա Իվանովիչի կաշվե բազկաթոռը կոչվում ե միայն կաշվե, բայց իրոք, նա փոշ տես՝ ճիլոպից ե, փոշ տես՝ թոկից, միայն թիկունքում մի կտոր կաշի յե մնում, իսկ մնացածն արդեն հինգ տարի յե, վոր բրբրվել ու թափվել ե: Գուցե սրանից ե նույնպես, վոր բոլոր զարպանները ծոված են ու պատշգամբը յերերվում ե: Իայց վճարել վորեվե, թեկուզ, անհրաժեշտագույն

բանի միանգամից յերկու, յերեք, հինգ հարյուր ուրբլի՝ նրանց համարյա ինքնասպանություն եր թվում:

Լսելով վոր շրջակայքի յերիտասարդ կալվածատետերից մեկը գնացել ե Մոսկվա և այնտեղ վճարել ե մի դյուժին շապկին յերեք հարյուր ուրբլի, քանհինգ ուրբլի կոշիկներին և քառասուն ուրբլի ժիլետին հարսանիքի համար, ծերունի Աբրամովը յերեսը խաչակնքեց և սարսափի արտահայտությունը դեմքին արագ-արագ վրա տվեց՝ «Այդպիսի բյալլազյոզին բանա պիտի նստեցնել»:

Առհասարակ նրանք խուլ եյին կապիտալների արող և կենդանի շրջանառության անհրաժեշտության, մթերքների ուժեղացրած արտադրողականության և փոխանակության՝ քաղաքատնտեսական ճշմարտությունների վերաբերմամբ: Նրանք հոգու պարզությամբ հասկանում և ի կատար եյին ածում կապիտալների միայն մեկ դործածությունը—պահում եյին նրանց սնդուկում:

Ընդունարանում բազկաթոռներին զանազան դիրքերով նստած՝ փչացնում են տան բրնտիկները, կամ սովորական այցելուները:

Սոսակիցների մեջ մեծ մասամբ տիրում ե խորին լուսթյուն. բոլորն ամեն որ տեսնվում են, մտավոր գանձերը փոխադարձաբար սպասված և հետախուզված են, իսկ դրսից նորություններ քիչ են ստացվում:

Անդորր ե. լավում ե Իլյա Իվանիչի տանը

կարած ծանր կոշիկների քայլերը. պատի պատյանով ժամացույցի ճոճանակն ել խույ շխշխկում և և Պելագեյա Իզնատյեվնայի, կամ Նաստասյա Իվանովնայի ժամանակ առ- ժամանակ ձեռքով, կամ ասամով կտրած թելը խախտում և խորին անդորրությունը:

Այսպես յերբեմն անցնում եր կես ժամ. միայն մեկն ու մեկը բարձրաձայն կհորան- ջեր և կխաչակնքեր բերանը, ավելացնելով «տե՛ր վողորձյա»:

Նրանից հետո կհորանջեր հարեվանը, հետո մյուսը դանդաղ կերպով, կարծես հրա- մանով, բացում եր բերանը և այսպես չարու- նակ թոքերի մեջ ողի վարակիչ խաղը կանց- ներ բոլորին ու վորեվե մեկի աչքերը կըջրա- կալեր:

Կամ Իլյա Իվանովիչը կմտենա լուսա- մուտին, կնայի և կասի մի քիչ զարմանքով — Դեռ ժամի հինգն և միայն, բայց արդեն ինչպես մութն և բակում:

— Այո, — կարատասխանի վորեվե մեկը, — ես ժամանակին միշտ մութն և լինում, յեր- կար յերեկոները մոտենում են:

Իսկ գարնանը կզարմանան և կուրախա- նան, վոր մոտենում են յերկար որերը: Բայց հարցրեք, թե ինչերին և պետք այդ յերկար որերը, իրանք ել չգիտեն:

Յեվ նորից կլսեն:

Ապա մեկը կուզենա մոմի քիթը կարել և հանկարծ կհանդգնի: Բոլորը կցնցվեն:

— Անսովնեկալ հյուսիս, — կասի անպատճառ մեկը:

Սրա վրա յերբեմն խոսակցություն կբաց- վի:

— Ով կարող և լինել այդ հյուսիս, — կասի տանտիրուհին: — Նաստասյա Փաղգեյեվնան չլինի: Ախ, տա աստված: Բայց չե՛ նա ասնից առաջ չի գա. այ՛, կուրախանայինք, հա՛: Այ՛ կվարվեյինք իրար ու մի կուշտ լաց կլի- նեյինք յերկուսով, հա՛: Առավոտյան ժամեր- գության ու պատարագին ել միասին կերթա- յինք... Բայց յես վորտե՛ղ, նա վորտե՛ղ, թե- պետ և նրանցից ջահել եմ, բայց եղբան կանդ- նեյ չեմ կարող:

— Բա են յե՞րբ եր, վոր նա ետեպից պը- նաց, — հարցրեց Իլյա Իվանովիչը: — Կարծեմ Յեղիայի որից հետո յեր:

— Ի՞նչ ես ասում, Իլյա Իվանովիչ, միշտ չփոթում ես: Նա Հոգեգալստին ել չսպա- սեց, — ուղղեց կինը:

— Նա, կարծեմ, Պողոս-Պետրոսի պատին կստեղ եր, — հակաճառում և Իլյա Իվանովիչը:

— Դու միշտ եղպես ես, — հանդիմանու- թյամբ կասի կինը: — Վիճում ես ու միայն խայտառակվում...

— Ախր, վո՞նց թե Պողոս-Պետրոսին չը- կար: Են ժամանակ ել բոլոր կարկանդակները սունկով եյինք թխում՝ նա սիրում և:

— Ախր եղ Մարիա Անխիմովնան և, նա յե սիրում սունկով կարկանդակ, ին՛չպես չես

հիշում: Մարիա Անխիմովնան ել չե թե մինչեվ Յեզիայի, այլ մինչեվ Պրոխորի և Նիկանորի որն եր հյուր:

Ժամանակի հաշիվը նրանք պահում եյին տոներով, տարվա յեղանակներով, ընտանեկան և տնային զանազան զեպքերով, չղիմեւով յերբեք վոչ ամիսներին, վոչ ամսաթվերին: Այս առաջ եր դալիս, գուցե, մասամբ նրանից, վոր բացի իրենից՝ Աբելովից, մնացած բոլորը չիտթում եյին և՛ ամիսների անունները, և՛ ամսաթվերի կարգը:

Հաղթված Իլյա Իվանովիչը կլտեր և ամբողջ հասարակութունը նորից կընկղմվեր նիրհի մեջ: Իլյուչան մոր ուսովը կախված՝ նույնպես նիրհում ե, յերբեմն ել բոլորովին ընում:

— Հա՛, — խոր հառաչանքով կասեր հետո հյուրերից մեկը, հանդուցյալ Վասիլիյ Փոմիչը՝ Մարիա Անխիմովնայի ամուսինը, տերըն իր հետ, վո՛րքան առողջ մարդ եր՝ բայց մեռավ: Վաթսուն տարի յել չսպրեց. եսպիտին մի հարյուր տարի ել ա պիտի ապրի:

— Բոլորս կմեռնենք, ով՛ յե՞րբ աստուծո կամքն ե, — անարկում ե հառաչանքով Պելագեյա Իգնատյեվնան: — Մեանողը մեռնում ե, բայց ահա Սյուրովների մոտ մկրտելը չեն հասցնում. ասում են Աննա Անդրեյեվնան նորից յերեխա յե բերել: Այս արդեն վեցերորդն ե:

— Մենակ Աննա Անդրեյեվնա՛ն, — ասաց տանտիրուհին. — նրա յեղբորն ել վոր ամուս-

նացնեն ու յերեխերքն սկսեն, հենց ե՛ղբան գլխացավանք կլինի՞: Փոքրերն ել հասնում են, փեսացու յեն գառնում, աղջիկներին մարդի տուր, իսկ այստեղ փեսացուներ վո՛րտեղից են: Հիմիկվա ժամանակին ել բոլորն ո՛ժիտ են ուզում՝ են ել փող:

— Եդ ի՞նչ եք ասում, — մոտ գալով դուրսըներին, հարցրեց Իլյա Իվանովիչը:

— Են ենք ասում վոր...

Յեվ պատմությունը նրան կկրկնեն:

— Ես ել քեզ մարդկային կյանքը, — խրատական յեղանակով ասաց Իլյա Իվանովիչը: — Մեկը մեռնում ե, մյուսը ծնվում, յերրորդն ամուսնանում, իսկ մենք ահա շարունակ ծերանում ենք, վոչ տարեցատարի, այլ որեցոր: Ինչո՞ւ յե այսպես: Ի՞նչ լավ կլիներ, վոր ամեն որ նման լիներ յերեկվան և յերեկը եզուցվան...

Մտածելիս մարդու սիրտը մորմուքվում ե...

— Մերը ծերանում ե՛, իսկ ջահելը մեծանում, — քնատ ձայնով ասաց մեկը անկյունից:

— Պեսք ե շատ աղօթել ասածուն և վոչնչի մասին չմտածել, — խիստ կերպով նկատեց տանտիրուհին:

— Ճիշտ ե, ճիշտ ե, — յերկշտությամբ արագ-արագ արձագանքեց Իլյա Իվանովիչը, վոր մտադրվեց փրկիստփայել, և նորից սկսեց յես ու առաջ ման դալ:

Յերկար ժամանակ ելի լուռ են. ասեղով յես ու առաջ անցկացող թեւերն են միայն

խղզում: Տանտիրուհին յերբեմն խղում է լը-  
սությունը:

— Հա, մութն է դուրսը, — ասում է. — թե  
աստված տա ջրորհնեքին հասնենք՝ մերոնք  
հյուր կզան. ա՛յ, ուրախություն կլինի և չի  
թվա, թե ինչպես են անցնում յերեկոները:  
Այ, թե Մալանիա Պետրովնան կգա՞. ի՞նչ գը-  
ժություններ չի սարքի, ի՞նչ ոյիններ չի հա-  
նի: Ել կլայեկ թափել, ել մոմ հալել, ել բակի  
գունից գուրս վաղել. իմ բոլոր աղախիններին  
ճամփից կհանի: Ել ինչ խաղ ասես չի հնարի...  
Շա՛տ ուրիշն է:

— Այո, աշխարհիկ տիկին է, — նկատեց  
խոսակիցներից մեկը: — Յերկու տարի առաջ  
խելքին փչեց սարից սահել. են ժամանակ եր,  
յերբ Լուկա Մավիչը հոնքը ջարզեց...

Հանկարծ բոլորը ցնցվեցին, նայեցին  
Լուկա Մավիչին և բարձրաձայն հռնացին:

— Են վոնց ե՞ր, Լուկա Մավիչ. ապա մի,  
ապա պատմի, — ասում է Իլյա Իվանովիչը և  
մեռնում է ծիծաղից:

Յեվ բոլորը շարունակում են հռնալ.  
Իլյուշան ել արթնացավ. նա յեւ է հռնում:

— Եհ, ի՞նչ կա պատմելու, — ասում է չը-  
փոթված Լուկա Մավիչը. ես բոլորն, այ, Ա-  
լեքսեյ Նատմիչի հնարածն է. բոլորովին վո-  
չինչ ել չի պատահել...

— Եհե՞, — խմբով ձայնեցին բոլորը. —  
վո՞նց թե վոչինչ չի պատահել: Մենք խոմ մե-  
ռած չե՞նք... Իա՛, ճակատդ, ճակատդ ինչ է.

ա՛յ, մինչեվ հիմա յեւ սպին յերեվում ե... — և  
հռնացին:

— Ախր ինչի՞ յեք ծիծաղում. — աշխատում  
է արտասանել ծիծաղի դաղարներին Լուկա  
Մավիչը: — Յեւ չեյի ել... այս բոլորը ավազակ  
վասիկեն... հին սահնակ եր ավել... տակիս  
քանդվեց... յես ել իք յեղա...

Ընդհանուր քրքիջը ծածկեց նրա ձայնը:  
Իզուր նա աշխատում եր վերջացնել իր անկ-  
ման պատմությունը: քրքիջը տարածվեց ամ-  
բողջ հասարակության վրա, անցավ նախա-  
սենյակը և աղախնանոցը ու բռնեց ամբողջ  
տունը, բոլորը հիշեցին գվարճալի դեպքը,  
բոլորը քոքում են յերկուր, միաձայն, անա-  
սելի՛ վոբպես Ուլիմպիական աստվածները:  
Հենց մոր սկսեն ձայները կտրել՝ մեկը նորից  
կսկո՛ի և նորից նույն պատմությունը:

Վերջապես, մի կերպ դժվարությամբ  
հանդստացան:

— Հը, ես տարի ջրորհնեքին պիտի սո-  
հե՞ն, Լուկա Մավիչ, — յեկուց հետս հարցրեց  
Իլյա Իվանովիչը:

Նորից քրքիջի ընդհանուր պայթյուն,  
մոր անվեց մոտ տանն րոպե:

— Չհրամայե՞նք, արդյոք, Անտիպին  
ջրորհնեքի տանեղին մի ստուցարուր չինի, —  
նորից կհարցնի Ալյոմովը: — Լուկա Մավիչը,  
կատենք, մեծ սեր ունի, բայց չի դիմանում...

Ամբողջ խմբի հռնոցը թույլ չավեց նրան  
վերջացնել:

— Գոն սա՞ղ են սահնակը, — ծիծաղի մի-  
ջից հաղիվ արտասանեց խոսակիցներից մեկը:  
Նորից ծիծաղ:

Յերկար ծիծաղում ելին բոլորը. վերջա-  
պես սկսեցին քիչ-քիչ հանդարտվել. վո՛րն  
արտասուքն եր սրբում, վո՛րը խնչում եր, վո՛-  
րը մոլեգին հագում և թքում ու դժվարու-  
թյամբ արտասանում:

— Ախ, տեր աստված, խուսը բոլորովին  
խեղդեց... Ծիծաղեցրեց են ժամանակ, հա՛,  
աստված վկա: Մեղքի տակ ընկանք: Վոնց եր  
նա մեջքը դեպի վեր, իսկ բաճկոնի վեշերը  
փռված . . .

Այստեղ վերջնականապես հետեվում եր  
վերջին, ամենայերկար հոհոցի թնդյունը  
և այնուհետեվ ամեն ինչ լռեց: Մեկը հառա-  
չեց. մյուսը բարձր հորանջեց՝ խոսք կցելով,  
և ամեն ինչ ընկղմվեց լռության մեջ:

Սոսիվա նման լավում ե միայն ճոճանա-  
կի ձայնը, Սբլոմովի կոչիկների թխկոցը և  
կծած թեկի ճթոցը:

Իլյա Իվանովիչը, խռովահույզ դեմքով,  
հանկարծ կանգնեց սենյակի մեջ տեղը, բռո-  
նելով ջիթի ծայրը:

— Սա ի՞նչ դժբախտությունն է: Մի նայե-  
ցե՛ք, — ասաց նա, — մարդ պիտի մեռնի — ջիթի  
ծայրը շարունակ քոր ե գալիս:

— Ախ, տեր իմ աստված, — ձեռքերը միմ-  
յանց խփելով, ասաց կինը, — ել ի՞նչ մեռնել,  
յեթե ջիթի ծայրն է քոր գալիս: Մեռել կլինի —

յերբ ջիթարմատն ե քոր գալիս: Ե՛, Իլյա Իվա-  
նովիչ, տեր ընդ քեզ, ի՛նչ վատ հիշողություն  
ունես: Այ, եղպես կասես մարդկանց մեջ, կամ  
հյուրերի ներկայությամբ՝ և ամոթ կլինի:

— Բայց ի՞նչ կնշանակի, յերբ ծայրն ե  
քոր գալիս, — հարցրեց ամոթահար Իլյա Իվա-  
նովիչը:

— Ըմպանակի մեջ նայել. թե չե այդ ինչ-  
պես կարելի յե՛ մեռե՛լ:

— Շարունակ չփոթում եմ, — ասաց Իլյա  
Իվանովիչը, — վո՞ր մեկը հիշես, ջիթը կամ  
կողքից ե քոր գալիս, կամ ծայրից, կամ հոն-  
քերը . . .

— Կողքից, — միջամտեց Պելագեյա Իվա-  
նովնան, — կնշանակի համբավներ. հոնքերն են  
քոր գալիս՝ արտասուք, ճակատը՝ գլուխ  
տալ ե նշանակում, աջ կողմից քոր են գալիս  
տղամարդի, ձախ կողմից՝ կնկա ականջները.  
ականջների քոր գալը՝ կնշանակի անձրեվ ե  
լինելու. չրթունքները՝ համբուրել. ընչացքը՝  
քաղցրավենիք ընծա ստանալ, արմունկը՝ նոր  
տեղում քնել, նրբանը՝ ճանապարհ . . .

— Ե՛հ, կեցցես, Պելագեյա Իվանովնա, —  
ասաց Իլյա Իվանովիչը: — Բա վոր յուզը եժան  
լինի, ծոճրա՞կը պիտի քոր գա, ինչ:

Տիկիները սկսեցին ծիծաղել և փափսալ.  
տղամարդկանցից մի քանիսը ժպտում ելին,  
քրքիջի նոր պոռթկում եր սպասվում, բայց  
այդ ըսպեյին սենյակում լավեց կարծես միա-  
ժամանակ շան մոռոց և կատվի Փշչոց, յերբ

նրանք պատրաստուում են հարձակվել միմյանց վրա: Ժամացույցի գրնդոցն եր:

— Ե՛, արդեն ժամը ինն է, — ուրախ զարմանքով ասաց Իլյա Իվանովիչը: — Տես, ե՛, չի յե՛լ յերեվում, թե ժամանակն ինչպես է անցել. Ե՛յ, Վաս՛կա, Վան՛կա, Մոս՛կա:

Յերեվացին յե՛հեք քնաթաթախի դեմքեր:

— Ինչի՞ չեք հարցը դրում, — զարմանքով և տահաճությամբ հարցրեց Աբլումովը: — Ամենեվին չեք մտածում պարոնների մասին: Ե, ի՞նչ եք կանգնել: Շուտ՝ ողի:

— Այ թե՛ ինչի յեր քթի ծայրը քոր գալիս, — արագ ասաց Պելագեյա Իվանովնան, — ողի կիմեք և ըմպանակի մեջ կնայեք:

Ընթրիքից հետո, համբուրվելուց և միմյանց խաչակնքելուց վերջը, բոլորը ցրվում են իրանց անկողինները և քունը թագավորում է անհող գլուխների վրա:

Իլյա Իլյիչը յերազում այգպիսի յերեկոներից տեսնում է վոչ թե մե՛կը, յերկո՛ւսը, այլ ամբողջ շարաթներ, ամիսներ ու տարիներ այսպես անցկացրած որերի ու յերեկոների:

Վոչինչ չեք խախտում այս կյանքի միտքինակությունը, և իրենք՝ արլումովցիք նրանից չեյին ձանձրանում, վորովհետեվ ուրիշ նիստ ու կաց չեյին ել պատկերացնում. իսկ յեթե կարողանային ել պատկերացնել՝ զարհուրանքով յերես կթեքեյին նրանից:

Ուրիշ կյանք նրանք վոչ կցանկանային և

վոչ ել կսիրեյին: Նրանք կցավեյին, յեթե հանդամանքները փոփոխություն մացնեյին նրանց կենցաղի մեջ, ինչ փոփոխություն ուզում է լինի: Թախիծը նրանց կլուծոտի, յեթե եզուցը այսորվա նման չլինի, և ելորը՝ եզուցվա:

Նրանց ինչի՛ն է պետք զանազանակերպությունը, փոփոխությունները, պատահականությունները, վորոնց ձգտում են ուրիշները: Թող ուրեմն ուրիշներն ել դատարկեն այդ բաժակը. իսկ իրենք՝ արլումովցիք վոչ մի բանի հետ գործ չունեն: Ուրիշներն ել թող ապրեն, ինչպես ուզում են:

Չե՞ վոր պատահականությունները, թեկուզ վորեվե տեսակի ոգուաները՝ անհանդըստացնող են. նրանք պահանջում են զլիսացավանք, հողսեր, վազվզոց, տեղի մի նստի, առուտուր արա, կամ գրի, մի խոսքով, շարժվի՛ր. հանաք բա՞ն է:

Նրանք շարունակում եյին ամբողջ տասնամյակներով փնչացնել, ննջալ և հորանջել, կամ գյուղական հումորից բարեսիրտ ծիծաղով խնդալ, կամ հավաքույթներ կազմելով պատմում եյին, թե ով ինչ է տեսել զիչերը յերազում:

Յեթե յերազը սարսափելի յեր լինում, բուրրը մտահոգում եյին, վախենում եյին. յեթե մարդարեյական եր լինում՝ բուրրն անկեղծ կերպով ուրախանում, կամ ախրում եյին, նա՛յելով, թե յերազում տեսածը վշտալի է, թե



մխիթարական ե յեղել: Յեթե յերազը պահանջեր սնտախապաչտական նշաններ պահել՝ դրա համար անմիջապես յեռանդուն միջոցներ եյին ձեռք առնվում:

Յեթե այս ել չեր լինում, այն ժամանակ խաղում են դուրաչկի, իսկ տոներին հյուրերի հետ բոստոն, կամ դրան-պասյանս են բաց անում, գուշակում են խաղաթղթերի վրա:

Յերբեմն մի-յերկու շաբթով հյուր կգա վորևե նատալիա Փաղեյեվնա. պառավները նախ և առաջ կբրբրեն ամբողջ շրջակայքը՝ ո՛վ ինչպես ե ապրում, ո՛վ ինչ ե անում. նրանք կթափանցեյին փոչ միայն ընտանեկան կենցաղի, ծածուկ կյանքի մեջ, այլ և ամեն մեկի դադանի մտքերի և դիտավորությունների մեջ, կհայհոյեն, կգատեն անարժաններին, ամենից շատ անհավատարիմ տղամարդ ամուսիններին, հետո հաշվում եյին զանազան դեպքեր՝ անվանակոչությունները, մկրտությունները, ծնունդները, ո՛վ ինչով ե հյուրասիրել, ում ե կանչել, ում՝ վոչ:

Մրանից հոգնելով, կսկսեն ցույց տալ հագուստները, վերնագգեստները, նույնիսկ ներքնագգեստները և գուլպաները: Տանտիրուհին կպարծենա տանը գործած ինչ-ինչ քաթաններով, թելերով, հաշիաներով:

Բայց կսպասվի և այս: Այնուհետև ժամանակ եյին անցկացնում սուրճերով, թեյերով և քաղցրավենիքներով: Հետո արդեն անցնում են լուսթյան:

Նստում են յերկար, մեկը մյուսին նայելով, ժամանակ առ ժամանակ խոր հառաչում են: Յերբեմն վորևե մեկը լաց ել կլինի:

— Ի՞նչ կա, մերս, — կհարցնի վրդովված մյուսը:

— Ո՛Ք, սիրտս տխուր ե, աղավնյակս, — ծանր հառաչանքով պատասխանում ե հյուրը: — Չայրացրել ենք տեր աստծուն, անիծյալներս: Խաթա յե դալու:

— Ա՛խ, մի վախեցնի, մի սարսափեցնի, հարադատս — խոսքը կտրում ե տանտիրուհին:

— Հա, հա, — շարունակում ե մյուսը, — վերջին որերը հասել են. կյե ինի ազգ-ազգի վրա, թագավորություն թագավորության վրա... կհասնի աշխարհի վերջը... արտասանում ե վերջապես նատալիա Փաղեյեվնան, և յերկուսն ել զանազին լաց են լինում:

Նատալիա Փաղեյեվնան այսպիսի յեզրակացության դալու վոչ մի հիմք չուներ. վոչ վոք վոչ վոքի գեմ չեր դուրս յեկել, մինչև անգամ այդ տարին դիտավոր չեր յեղել, բայց լգառավները յերբեմն մութ նախազգացումներ են ունենում:

Վորևե անակնկալ հազվադեպ պատահար կարող եր խախտել այս ժամանցը, յերբ, որինակ, ամբողջ տունը մեծից մինչև փոքր կրոնվեյին ամխահոտով:

Տանը և դյուղում ուրիշ հիվանդությունների մասին համարյա չեր ել լավում. գուցե միայն վորևե մեկը մթության մեջ կընկնի ցցի

վրա և վորեւ տեղը կպատուի, կամ կգլորվի թալվարից, կամ կտրից տախտակ կընկնի և Կլխին կգլխաչի:

Բայց այս բոլորը քիչ եր պատահում և ոյսպիսի անակնկալների գեմ գործ եյին անվում անային փորձված միջոցներ. Չարգված տեղը չփում են գետային սպունգով, կամ յեղածաղկով որհնած ջուր են խմացնում, կամ ազոթք են շնջում և ամեն ինչ անցնում է:

Բայց անխաճոտից բռնվելը հաճախ եր պատահում: Այս դեպքում բոլորը պառկոտում են անկողիններում, լավում է ախ ու վախ, հառաչանք. մեկը գլխին տապակ վարունգ է շարում և սրբիչով կապում, մյուսը՝ ականջները հապալասու պտուղներ է դնում և մանանեխ հոտոտում, յերբորդը շապկանց սառնամանիք է դուրս գալիս, չորրորդն անզգա ուղղակի ընկած է հատակին:

Այս պատահում եր պարբերաբար, ամսական մեկ, կամ յերկու անգամ, վորովհետեւ չեյին սիրում տաքությունն իղուր տեղը ծըրհելուցով բաց թողնել և վառարանները փակում եյին այն ժամանակ, յերբ նրանց մեջ այնպիսի բոց եր պլպլում, ինչպես «Ռորբրոս գեվի» մեջ: Վոչ մի փոխի, վոչ մի վառարանի չէր կարելի ձեռք մոտեցնել՝ մեկ ել տեսար բշտեց:

Մի անգամ միայն նրանց կենցաղի միորինակությունը խախտվեց իսկ վոր հանկարծակի դեպքով:

Յերբ յեռանդազին ճաշից հանգստանալուց հետո բոլորը հավաքվեցին թեյի, հանկարծ յեկավ քաղաքից վերադարձած արլոմովյան մի գեղացի, վոր ձեռքը յերկար ծոցում խառնելուց հետո՝ հազիվ հանեց մի նխրած նամակ իլիս իվանովիչ Աբլոմովի անունով:

Բոլորն ապշեցին, տանտիրուհու զեմքը մինչև անգամ մի քիչ այլայլվեց. բոլորն աչքերը հառեցին և քթերը յերկարացրին նամակի ուղղությամբ:

— Այս ինչ տարրինակ բան է: Ումից է, ուչքի գալով վերջապես ասաց տանտիկինը:

Աբլոմովին առավ նամակը և տարակուսանքով շուռ ու մուռ եր տալիս ձեռքին, չեմանալով, թե ինչ անի այն:

— Վո՞րտեղից է, — հարցրեց նա գեղացուն: — Ո՞վ ավեց քեզ:

— Են պանդուկում, վորտեղ քաղաքում իջևանել եյի, իմանրմ ե՞ս, — պատասխանեց գեղացին, — ասացին, վոր փոշտից յերկու անգամ յեկել հարցրել են՝ արլոմովիչի գեղացի չկա՞, իմանրմ ե՞ս, աղին նամակ կա, ասել եյին:

— Հետո՞...

— Հետո, յես առաջ հրա թաք կացա, դինվորը հեռացավ նամակը հետը: Բայց վերլուծովի տիրացուն տեսավ ինձ, նա յել իմաց տվեց: Մըն ել եկան: Հենց վոր մըն ել եկան՝ ուշունց տվին և նամակը տվին, հրա դեռ մի շահի յել առան: Յես հարցրի՞ թե ես ի՞նչ ա-

նեմ, ո՞ւր տանեմ: Հրամայեցին ձեր վողորմա-  
ծութեանը տամ:

— Իսկ դու չեյիր վերցնի՛, — բարկացած  
նկատեց խանուսը:

— Յես չեյի յեւ վերցնում: Մեր ինչի՞ն է  
պետք, ասում եմ, նամակը, մեզ հարկավոր  
չի: Մեզ, ասում եմ, չեն հրամայել նամակներ  
վերցնել, յես իրավունք չունեմ. ոչ ոք ելեք ձեր  
նամակովը: Բայց զինվորն սկսեց թունդ ու-  
շունց տալ. ուզում եր իշխանութեանը դան-  
դաովի. յես եւ վերցրի:

— Հիմա՛ր, — ասաց խանուսը:

— Ումի՞ց կարող ե լինել, — մտադրաց ա-  
սում եր Աբլումովը, նայելով հասցեյին: — Ձեռ-  
քը կարծես թե ծանոթ ե:

Յեվ նամակը ձեռքից ձեռք անցավ: Սկըշ-  
վեցին մեկնաբանութեաններն ու յենթադրու-  
թեանները՝ ումի՞ց և ինչի՞ մասին կարող ե  
լինել: Վերջապես՝ բոլորը շվարեցին:

Իլիա Իվանովիչը հրամայեց գտնել ակ-  
նոցները: Վորոնում եյին մոտ ժամ ու կես:  
Դրեց և արդեն մտադիր եր բանալ նամակը:

— Թո՛ղ, մի՛ բանա, Իլյա Իվանովիչ, —  
ասով կանգնեցրեց նրան կինը, — ով գիտի թե  
ի՞նչ նամակ ե: Կարելի յե մի գարհուրելի, խա-  
թաբալա բան ե: Չե՞ս տեսնում հիմա մարդիկ  
ինչ են դատել: Վաղը կամ մյուս որը կբանաս,  
քեցնից չի փախչի:

Յեվ նամակն ակնոցների հետ դրին փակի  
տակ: Բոլորը թեյով ելան: Նա այնտեղ տարի-

ներով կպառկեր, յեթե չափազանց անսովոր  
յերևույթ չլիներ և չալեկոծեր արևմտկյնե-  
րի մաքերը: Մյուս որը թեյի վրա բոլորի խո-  
սակցութեանը նամակի մասին եր:

Վերջապես, չգիմացան և չորբորդ որը  
խմբվելով՝ շփոթված բաց արին: Աբլումովը  
նայեց ստորազրույթյանը:

— «Բաղիչչեմ» — կարգաց նա: — Ե՛, ակը  
այս Ֆիլիպպ Մատվեյիչիցն ե:

— Հա՛, հե՛յ, ա՛յ, թե ումից ե, — ձայ-  
նեցին ամեն կողմից: — Ի՞նչպես ե, վոր նա  
մինչեվ հիմա կենդանի յե: Արի տես, վոր դես  
չի մեռել ելի՛: Եհ, փառք աստուծո: Ի՞նչ ե  
դրում:

Աբլումովն սկսեց բարձր կարգալ: Բանից  
դուրս յեկավ, վոր Ֆիլիպպ Մատվեյիչը խընդ-  
բում ե ուղարկել գարնիլի քեցեպար, վոր  
Աբլումովիցում առանձնապես լավ եյին յե-  
փում:

— Ուղարկել, ուղարկել նրան, — ասացին  
բոլորը: — Նամակ պիտի գրվի:

Այսպես մոտ յերկու շաբաթ անցավ:

— Պետք ե, պետք ե գրել, — ասում եր  
Իլիա Իվանովիչը կնոջը: — Բայց վո՞րտեղ ե  
րեցեպար:

— Ի՞նչ իմանաս վորտեղ ե, — պատասխա-  
նում եր կինը: — Դեռ պետք ե գտնել: Սպասի,  
ի՞նչ ես շտապում: Ա՛յ, ասաված կտա տոներին  
կհասնենք, կթաթախվենք, են ժամանակ ել  
կգրես, դեռ չի փախչի:

— Իսկապես տոնին ավելի լավ կգրեմ, —  
ասաց Իլիա Իվանովիչը:

Տոնին նորից խոսք յեղավ նամակի մասին:  
Իլյա Իվանովիչը բոլորովին պատրաստվեց  
գրելու: Նա գնաց առանձնասենյակը, ահնոցը  
գրեց ու նստեց սեղանի առաջ:

Տանը խորին անդորրություն թագավո-  
րեց: Մասաներին հրամայվեց վրտներով չդո-  
ւիել և աղմուկ չհանել:—«Աղան գրում ե», —  
ասում էլին բոլորն այնպիսի յերկչոտ հար-  
գանքի ձայնով, վորով խոսում են, յերբ տանը  
մեռել կա:

Իանդազ, ծուռ ու մուռ, դողդոջուն ձեռ-  
քով և այնպես զգուշությամբ, կարծես, ինչ  
վոր վասնզավոր գործ է կատարում, նա հա-  
ղիվ էր գուրս բերել «վողորմած աեր», յերբ  
նրա մոտ յերևաց կինը:

— Վորոնեցի, վորոնեցի, բեցեպա չկա, —  
ասաց նա:—Պետք է ննջարանի պահարանումն  
էլ վորոնել: Բայց նամակն ի՞նչպես պետք է  
ուղարկենք:

— Փոստով պետք է ուղարկել, — պատաս-  
խանեց Իլյա Իվանովիչը:

— Իսկ վորքա՞ն արժե մինչև այնտեղ:

Աբլումովը վերցրեց հին որացույցը:

— Բառասուն կոպեկ, — ասաց նա:

— Ա՛յ քեզ, քառասուն կոպեկ էլ դատարկ  
բանի համար դեն գցի, — նկատեց կինը, — ա-  
վելի լավ է սպասենք, գուցե հարմար գեպը

լինի քաղաքից դեպի այն կողմը: Հրամայիր  
գեղացիներին իմանան:

— Յեվ իրոք, դեպքով ավելի լավ կլինի, —  
պատասխանեց Իլիա Իվանովիչը և գրեչը սե-  
ղանին չրխկացնելով, կոխեց թանաքամանի  
մեջ և վերցրեց ահնոցները:

— Ճիշտ, ավելի լավ կլինի, — յեզրափա-  
կեց նա, — դեռ չի փնխչի՞ կուղարկենք:

Հայտնի չէ՞ Ֆիլիպպ Մատվեյեվիչն րե-  
ցեպան ստացավ, թե՞ չէ:

Իլյա Իվանովիչը յերբեմն գիրք էլ է վեր-  
ցնում ձեռքը. նրա համար միևնույն է, —  
վորեւե գիրք: Նա ընթերցանության եյական  
պահանջ չէր դրում, այլ համարում էր այն չը-  
ռայություն, այնպիսի գործ՝ առանց վորի  
յեւ կարելի յե հեշտությամբ յոլա պնալ, ճիշտ  
այնպես, ինչպես կարելի յե պատին նկար ու-  
նենալ և չունենալ. կարելի յե դնալ դրոսներու  
և կարելի յե չդնալ. այս պատճառով նրա հա-  
մար միևնույն է՝ ինչ գիրք ուզում է լինի: Նա  
գրքին նայում էր վորպես մի էրի, վոր նշա-  
նակված է ձանձրութիւնը ցրելու և պարապը  
լցնելու:

— Վաղուց է գիրք չեմ կարդացել, — ա-  
սում է նա, կամ, յերբեմն, դարձվածքը փո-  
խելով — ապա, գիրքը տուր մի կարգամ, —  
կատի, կամ պարզապես աչքի սուղով ի միջի  
այլոց պատահամբ կատանի յեզրորից մնացած  
գրքերի վոչ մեծ կույտը և առանց ընտրելու  
կհանի ինչ—վոր ձեռքն ընկնի: Գովիկովը կընկ-

նի ձեռքը, թե նորագույն յերազանը, Սե-  
րասկովի «Տրոսիադան», թե Սուլամարոկովի վոդ-  
բերդությունը, կամ թե, վերջապես, յերկու  
տարի առաջ լույս տեսած լրագրերը, — նա ա-  
մեն ինչ կարգում է հավասար բավականու-  
թյամբ, ժամանակ առ ժամանակ կցելով՝

— Տես ե՛, ի՛նչ է հնարել: Ա՛յ, ավազակ:  
Քո տունը չքանդվի, հա՛:

Այս բացականչությունները վերաբերում  
էյին հեղինակներին, մի կոչում, վոր նրա աչ-  
քում վոչ մի հարգանք չուներ: Մինչև անգամ  
նա յուրացրել էր դեպի գրողներն այն կիսա-  
արհամարհանքը, վոր տածում էյին դեպի նը-  
րանց հին ժամանակվա մարդիկ: Նա, ինչպես  
չատերն այն ժամանակ, հեղինակին համարում  
էր վոչ այլ ինչ, յեթե վոչ ուրախ մարդ, քեֆ  
անող, հարբեցող և մատխարա, լարտիադացի  
նման:

Նա, յերբեմն, բարձր ձայնով, բոլորի հա-  
մար կարգում է յերկու տարի առաջ լույս տե-  
սած լրագրերից, կամ նրանց այսպես տեղե-  
կություններ է հաղորդում:

— Ահա Հաագից գրում են, — կասի նա, —  
վոր նորին մեծության արքան բարեհաճեց հա-  
ջող կերպով պալատ վերադառնալ կարճատե  
ճանապարհորդությունից, և ակնոցներէ վերից  
կնայի բոլոր լսողներին:

Կամ՝

— Վիեննայում այս ինչ դեռպանը հանձ-  
նեց իր հավատարմաթղթերը:

— Ահա այստեղ գրում են, — կարդում էր նա  
նորից, — վոր տիկին Փանլիսի հեղինակու-  
թյունները թարգմանվել են ռուսական լեզ-  
վով:

— Այս բոլորը, հավանորեն, նրա համար  
են թարգմանվում, վոր մեր նման ազնվական-  
ներից փող կորզեն, — նկատում է լսողներից  
մեկը՝ մի մանր կալվածատեր:

Իսկ խեղճ Իլյուչան գնում է, հա՛ գնում  
Շտոլցի մոտ սովորելու: Յերկուշարթի որը  
հենց վոր նա զարթնում է, նրա վրա տխրու-  
թյուն է դալիս: Նա լսում է վասիկի զել ձայնը,  
վոր պատշգամբից բղավում է՝

— Անտիպկա, Չալին լծիր՝ փոքր աղային  
գերմանացու մոտ տանելու:

Նրա սիրտը թնդում է: Նա տխուր դալիս  
է մոր մոտ: Սա գիտե ինչի համար է սկսում է  
գլուխը յեղել, ինքն էլ գաղտնի հոգոց հանե-  
լով՝ մի ամբողջ շարաթ նրանից անջատվելու  
համար:

Չգիտեյին, թե այդ առավոտը ի՛նչպես կե-  
րակրեն նրան. թխում են նրա համար բուլկի,  
կրեմլի, հետը դնում են ազ դրած մթերքներ,  
թխվածքներ, քաղցրավենիներ, դանսազան  
պատտիլներ և դանսազան ամեն տեսակի չոր ու  
թաց անուշեղեններ և, մինչև անգամ, ուտես-  
տի պաշար: Այս բոլորը արվում էր այն նկա-  
տումով, վոր գերմանացու մոտ առատ չեն կե-  
րակրում:

— Այնտեղ չես լիանա, — ասում էյին ար-

լովովցիք, — ճաշին սուպ, տապակած ու կարտոֆիլ կտան, թեյին կարագ, իսկ ընթրիքին՝ մորգեն-Փրի—քիթղ սրբի:

Սակայն Իլյա Իլյիչը յերազում ավելի տեսնում եր այնպիսի յերկուշաբթիներ, յերբ նա վառակի ճայնը չի լսում, վոր հրամայում է լծել Չալիկին, և յերբ մայրը թեյին նրան հանդիպում է թպխաով և դուրեկան նորությամբ:

— Այսոր չես գնա, հինգշաբթի մեծ տոն է. արթե՞ արդյոք յերեք որվա համար գնալ ու գալ:

Կամ, յերբեմն, հանկարծ կհանձնարարի նրան, վոր այսոր ծնողական շարաթ է, սովորելու ժամանակ չե, բլինի պիտի պատրաստենք:

Յերբեմն ել կպատահի, վոր մայրը յերկուշաբթի առավոտյան շեշտակի կնայի նրան և կասի՝

— Այսոր աչքերդ մի տեսակ թարմ չեն: Առո՞ղջ ես արդյոք, — և գլուխը կպտտի:

Խարդախ տղան առողջ է, բայց լուռ է:

— Ապա՛ մի ես չարաթ տանը նստի, — կասի նա, — իսկ հետո տեսնենք աստված ի՞նչ կտա:

Յեվ տանը բոլորը համոզված էյին, վոր ուսումը և ծնողական շարաթը վոչ մի կերպ չեն կարող միմյանց զուգարկալել և կամ հինգշաբթի որվա տոնը անհաղթելի արդելք է ամբողջ շարաթվա սովորելուն:

Յերբեմն միայն ծառան կամ ծառայող աղջիկը, վոր տուժել էյին փոքր աղայի պատճառով՝ կվնթինթան՝

— ՈւՖ, լպտած, յերբ պիտի ոադ ըլես բո գերմանացու մոտ:

Մեկ-մեկ ել գերմանացու մոտ հանկարծ կհայտնվի Անտիպկան ծանոթ Չալի հետ շարաթվա կիսին, կամ սկզբին՝ Իլյա Իլյիչին տանելու:

— Հյուր են յեկել, հրեն, Մարիա Սալիչնան, կամ Նատալիա Գադեյեվնան, կամ Կուզավիովները բոլոր յերեխաներով, ուրեմն համեցեք տուն:

Յեվ մոտ յերեք շաբաթ Իլյուչան հյուր է մնում տանը, հետո յել տես վոր, շարչարանաց շաբաթը հեռու չե, այնուհետեվ ել տոնն է գալիս, տանեցիկներից մեկը, չգիտես ինչի, վորոշում է, վոր կարմիր կերակվա շաբթին չեն սովորի. մինչեվ ամառ ել մի-յերկու շաբաթ է մնում, շարժե գնալ, իսկ ամառն ինքը գերմանացին ել է հանգստանում, ուրեմն լավ է մինչեվ աշուն հետաձգել:

Կտեսնես, կես տարվա ընթացքում Իլյա Իլյիչը կդիրանա, ինչպե՞ս նա կաճի այդ ժամանակամիջոցում, ի՞նչպես կհաստանա: Ի՞նչ փառավոր քնում է: Խելքամաղ կլինեն տանը նրա վրա, հիշատակելով ընդհակառակը, վոր շաբաթ որը գերմանացուց վերադառնալիս՝ յերեխան գունատ և լղար է լինում:

— Խաթեն հեռու չե, — ասում էյին հայրն

ու մայրը, — ուսումը չի փախչի, բայց առույ-  
ջությունը չես գտնի. առողջությունը կյան-  
քում ամեն ինչից թանկ է: Տեսնո՞ւմ ես, նա  
ուսումից՝ ինչպես հիվանդությունից է վե-  
րադառնում. գիրությունն ամբողջովին կոր-  
չում է. վտիտ է մի տեսակ... չար ել է. շա-  
րունակ հենց վաղվզել է ուզում:

— Այո՛, — կնկատի հայրը, — հանաք բան  
չէ ուսումը. բւ՛ւմ ասես՝ սամու պես կկռացնի:

Յեւ վճռույ՞ ծնողները շարունակում էյին  
առիթներ վորոնել վորդուն տանը պահելու  
համար:

Բացի տոներից առիթներ շատ էյին լի-  
նում: Զմեռը ցուրտ եր թվում նրանց, ամառը  
չոգի պատճառով ելի չարժե գնալ. յերբեմն ել  
անձրեկ կգա, աչնանը ցեխ ու բաթլախն է  
խանգարում:

Յերբեմն Անտիպկան ինչ վոր կասկածե-  
լի կթվա. հարբած է՞, հարբած չէ, բայց ինչ  
վոր վայրենի հայացք ունի. խաթա կարող է  
պատահել՝ կխրվի կմնա, կամ շուռ կտա վո-  
րեվե տեղ:

Աբլումովներն աշխատում էյին սակայն  
այդ առիթներին վորքան հնարավոր է ավելի  
որինահանություն տալ, թե՛ իրենց սեփական  
աչքում և թե մանավանդ Շտոլցի աչքում,  
վորը ծնողների յերեսին և թե յետեվից դոն-  
ներվետտերներ չեր խնայում այսպես յերես  
տալու համար:

Պրոստակովների և Սկոտինինների ժամա-  
նակները վաղուց անցել էյին:

Այն առածը, թե՛ ուսումը լույս է, իսկ ա-  
նուսումնութունը — խավար՝ բուհինխտների  
տարածած գրքերի հետ թափառում եր ավան-  
ներում ու գյուղերում:

Ծերերը հասկանում էյին լուսավորու-  
թյան սգուտը, բայց միայն նրա արտաքին ո-  
գուտը: Նրանք տեսնում էյին, վոր բոլորը մարդ  
են դառնում, այսինքն՝ ձեռք են բերում աս-  
տիճաններ, խաչեր և փող, վոչ այլ կերպ, քան  
ուսման միջոցով. վոր հին գրագիրների, վա-  
ղեմի սովորութիւնների, չափերանների և նենգու-  
թյան մեջ ծերացած, կորզացած գործարար-  
ների դրությունը ծառայության մեջ վատա-  
նում է:

Սկսեցին չարագուշակ լուրեր պտտել վոչ  
միայն գրագիտության անհրաժեշտության,  
այլ և մինչ այդ այն կենցաղում չլսված դի-  
տությունների մասին: Տխողոսավոր խորհր-  
դականի և կոլլեգիական ասեսորի մեջ բաց-  
վեց անդունդ, վորին, վորպես կամուրջ ծա-  
ռայում եր ինչ վոր դիպում:

Հին ծառայողները, սովորութի գավակ-  
ները և կաշառքների սաները սկսել էյին ան-  
հայտանալ: Շատերին, վորոնք ժամանակին  
չէյին մեռել, հեռացրին անբարեհուսության  
համար, մյուսներին դատի տվին: Ամենաբախ-  
տավորները նրանք էյին, վորոնք իրերի նոր  
դրությունից փեշերը թափ տալով, վողջա-

ուղղ քաջվեցին սեփական ջանքերով ձեռք բերած անկյունները:

Աբլումովները կռահում էին այդ և հասկանում կրթության ոգուտը, բայց միայն այս ակնհայտ ոգուտը: Ուսման ներքին պահանջի մասին նրանք դեռ ևս մութ և հեռավոր հասկացողություն ունեցին և այս պատճառով ուզում էին իրենց իլյուշի համար առայժմ ձեռք բերել մի քանի փայլուն առավելություններ:

Նրանք յերազում էին նրա համար և ասեղնագործ մուշկեր և յերեվակայում էին նրան պալատի խորհրդական, իսկ մայրը նույնիսկ և նահանգապետ. բայց այդ բոլորին նրանք կուղեցին հասնել, վորքան կարելի յե ետան գնով, գանազան խորամանկություններով, գաղտագողի խուսափել լուսավորության, փառքի և պատիվների ճամփի դանազան քարերից ու արգելքներից, առանց նրանց վրայից թռչելու նեղության, այսինքն, որինակ՝ սովորել թեթեմակի, առանց հողին ու մարմինը մաշելու, յերեխա ժամանակ ձեռք բերած որհնված գիրությունը կորցնելու, այլ այնպես, վոր միայն պահպանվի հրահանգված ձեւը և մի կերպ ձեռք բերվի վկայական, վորտեղ ասված լինի, թե իլյուշան անցել է բոլոր գիտություններն ու արվեստները:

Աբլումովյան գաստիարակության այս ամբողջ սիստեմը հանդիպեց խիստ դիմադրության Շտոլցի սիստեմի կողմից: Պայքարը

յերկուստեք համառ եր: Շտոլցը ուղղակի, բացեիբաց և հաստատակամությամբ հարվածում էր հակառակորդներին, իսկ նրանք հարվածներից խուսափում էին վերը նշած և այլ խորամանկություններով:

Հաղթության բախտը վոչ մի կերպ չէր վարոչվում: Գուցե և գերմանական հաստատակամությունը հաղթեր էլ արլումովցիներին համառությանն ու անչարժությանը, բայց գերմանացին դժվարությունների հանդիպեց իր սեփական կողմից և հաղթությանը վիճակված չէր թեքվել այս կամ այն կողմը: Բանն այն է, վոր Շտոլցի վորդին յերես էր տալիս Աբլումովին, դասերը նրան ծածուկ թելադրելով, կամ նրա փոխարեն թարգմանություններ կատարելով:

Իլյա Իլյիչը պարզ տեսնում է և իր տեսքին կենցաղը, և ապրուստը Շտոլցի մոտ:

Նա իրենց տանը հենց վոր դարթնի՝ նրա մոտ արդեն կանգնած է Զախարկեն, հետագայում նրա հռչակավոր սենեկապետ Զախար Տրոֆիմիչը:

Զախարը դայակի նման նրա վոտներին է քաշում գուլպաները, հաղցնում է կոչիկները, իսկ իլյուշան, վոր արդեն տասնչորս տարեկան աղա յե, պահպան՝ նրան գեմ է անում այս կամ այն վոտքը. իսկ յեթե վորեմբ բան մի քիչ լավ չիվա, այն ժամանակ Զախարկի բլին վոտքով կթրիկացնի:

Յեթե դժգոհ Զախարկեն մարովն անցկաց-



ներ դանդատվել, դեռ մեծերից ել հարված-  
ներ կատանար:

Հետո Չախարկեն սանրում ե գլուխը,  
հագցնում ե բաճկոնը, Իլյա Իլյիչի ձեռները  
զգուշությամբ անցկացնելով թեվքերի մեջ,  
վոր նրան շատ չանհանգստացնի և հիշեցնում  
ե Իլյա Իլյիչին, վոր պիտի այս անի, այն աս-  
նի, առավոտյան վերկենալուց պիտի լվացվի  
և այլն:

Հենց վոր Իլյա Իլյիչը վորեվե բան ցան-  
կանա, աչքը ճպելուն պես, յերեք-չորս ծառա  
վրա յեն պրծնում նրա ցանկությունը կատա-  
րելու: Բան վայր գցի, թե պետք լինի վորեվե  
բան ճարել և չճարի, մի բան բերի, մի բանի  
վազի, նա, վորպես կայտառ տղա, ուզում ե  
վրա պրծնի և ամեն ինչ ինքն անի, բայց այս-  
տեղ հանկարծ հայրն ու մայրը և յերեք մորա-  
քույրը հինգ ձայնով կրդավեն:

— Ինչի՞, ո՞ւր, իսկ Վասիկեն, իսկ Վան-  
կեն, իսկ Չախարկեն ինչի՞ համար են: Եյ՛,  
Վասիկա, Վանիկա Չախարկա, ի՞նչ եք նա-  
յում, բաց բերաններ, այ՛, յես ձեր...:

Յեվ Իլյա Իլյիչին վոչ մի կերպ չի հաջող-  
վի վորեվե գործ անի իր քն իր համար:

Հետո նա գտավ, վոր այսպես ուվելի հան-  
գիստ ե և ինքն ել սովորեց բղավել՝ «Եյ՛,  
Վասիկա, Վանիկա, ես՛ տուր, են՛ տուր: Ես չեմ  
ուզում, են՛ եմ ուզում: Վա՛ղի, բե՛ր»:

Յերբեմն ծնողների քնքույշ հոգատարու-  
թյունը ձանձրացնում ել եր նրան:

Սանդուխքից վաղի, թե բակում, — հան-  
կարծ նրա յետեվից տասը հուսահատ ձայն ե  
լավում՝

— Ախ՛, ախ՛, բռնեցեք, կանգնեցրեք:  
Կընկնի, կջարդվի՛... կանգնի՛ր, կանգնի՛ր:

Փորձ անի ձմեռը դուրս թռչել նախասեն-  
յակի, կամ ողանցքը բանալ՝ նորից աղաղակ-  
ներ՝

— Եյ՛, ո՞ւր, ինչպե՞ս կարելի յե: Մի՛ վա-  
ղի, մի՛ դնա, մի՛ բանա, կջարդվես, կմըսես...:

Յեվ Իլյուշան տրամությամբ մնում եր  
տանը, վայելալված, վորպես արեվադարձա-  
յին ծաղիկը ջերմոցում, և այնպես, ինչպես  
վերջինը ապակու տակ՝ նա աճում եր դանդաղ  
ու դարուկ: Արտահայտություն վորոնող ու-  
ժերը մղվում եյին ներս և դալկանալով՝ ընկ-  
ճում:

Յերբեմն նա արթնանում ե այնպե՛ս  
թարմ, առույգ, ուրախ. նա գգում ե՝ նրա մեջ  
ինչ վոր խաղում ե, յետում, կարծես նրա մեջ  
ինչ վոր դեվուկ ե մտել, վոր նրան շարունակ  
հրահրում ե կամ կտուրը բարձրանալ, կամ  
հեծնել Սավրասկին և արշավել դեպի մարգա-  
դետիները, վորտեղ խոտ են հնձում, կամ՝  
գետիները, վորտեղ խոտ են հնձում, կամ՝  
զեք արած նստել ցանկապատին, կամ՝ հանկարծ ցան-  
կան շներին հաջացնել, կամ՝ հանկարծ ցան-  
կություն առաջ կգա վաղելով անցնել գյուղը,  
հետո դաշտը, խոռոչների վրայով կեչու պու-  
րակը, և յերեք թռիչքով ընկնել խանդակի

հատակը, կամ միանայ յերեխաներին՝ ձնագլու-  
դի խաղալու, իր ուժերը փորձելու:

Ինվուլը շարունակ նրան անհանգստաց-  
նում է: Նա դիմանում, դիմանում է, վերջա-  
պես չի համբերում և, հանկարծ, անդլխարկ,  
ձմեռը, թռչում է պատշգամբից բախը, այն-  
տեղից դուրս, յերկու ձեռքն առնում մի-մի  
ձնագունդ և վաշում է դեպի յերեխաների  
խումբը:

Պաղ քամին ուղղակի պոկում է նրա յերե-  
սը, սպանամանիքը կծում է ականջները, ցուր-  
տը լցվում է բերանն ու կոկորդը, խսկ կուրծ-  
քը լցվում է ուրախությամբ. ինչքան վոս-  
քերումն ույժ կա վազում է, ինքն էլ ճղղում  
է, հռհռում:

Ահա և աղաները՝ ձնագունդը պեցեց- չը-  
դիպավ՝ վարժություն չունի: Հենց ուզում եր  
ելի ձյուն մերցնի, վոր նրա ամբողջ յերեսը  
ձեփեց մի մեծ ձնագունդ, նա ընկավ. անսո-  
վորությունից նա և՛ ցավ է զգում, և՛ ծիծա-  
ղում է, և՛ ուրախ է, և՛ աչքերին արատուք  
կա...

Իսկ տանն աղաղակ է բարձրանում՝ Իլ-  
յուչեն չկա՛: Ծիչ, աղմուկ: Զախարկեն դուրս  
թռավ բախը, նրա յետեվից Վասիկան, Միա-  
կան, Վանիկան, բոլորը պլուխները կորցրած,  
վազում են բախում:

Նրանց յետեվից, նրանց կրունկներից  
բռնելով, յերկու չուն ընկան, վորոնք, ինչ-

պես հայանի յե, վազող մարդ. սառնասիրտ  
տեսնել չեն կարող:

Մարդիկ ճիչերով ու կանչերով, չներ  
հաջելով՝ վազում են դյուղամիջով:

Վերջապես, վրա վազեցին յերեխաներին  
և սկսեցին դատաստան անել՝ վո՛րի մազերից,  
վո՛րի ականջներից, վո՛րի վզակոթին. սպառ-  
նացին և նրանց հայրերին:

Հեռո արդեն ձեռք պեցեցին փոքրիկ աղա-  
մին, փաթաթեցին հեռները վերցրած քուրքի  
մեջ, հեռո հոր մուշտակի, հեռո յերկու վեր-  
մակի և հանդիսավոր կերպով, ձեռների վրա  
բերին աուն:

Նրան կորած համարելով, տանը տեսնելու  
հույսը կարել էլին. բայց նրան կենդանի և  
անվնաս տեսնելով՝ ձնողները անչափ ուրա-  
խացան: Փառք տվին տեր աստծուն, հեռո նը-  
խացան: Փառք տվին տեր աստծուն, յերեկո-  
յան դաղձ և ապա շամբուկի խմացրին, յերեկո-  
յան ել մոտ, և յերեք որ անկողնում պահեցին,  
բայց նրան մի բան կարող եր ողտակար լինել՝  
նորից ձնագունդի խաղալ:

Վ Ե Ր Չ Ա Ր Ա Ն

«Աբլումովի յորագը» — Գոնչարովի «Աբլումով» բնագարծակ վեպի միայն մի գրուելն է:

Վեպում մանրամասն պատմված է Իլյա Իլյինի Աբլումովի ամբողջ կյանքը՝ վաղ մանկութունից մինչև գերեզման: Բայց կյանքը վորոշվում էր այն միջավայրով և այն դատարարակությամբ, վորոնց մեջ մեծացել էր Իլյուչան: Իսկ այդ միջավայրը խուլ, լճացած գաւփառական ազայականության միջավայրն էր ճորտատիրական շրջանում:

Յերկու հիմնական պայմանով էր վորոշվում այդ կյանքը՝ հողատիրությամբ և ստորկատիրությամբ: Ճորտ գյուղացիների աշխատանքով ապահովված և իրենց արտոնությունների մեջ վոստիկանական և այլ իշխանություններից պաշտպանված Աբլումովյան կալվածատերերը հնարավորություն էյին ըստանում վորչինչ չանելու: Նրանք կյանքը հաստանում էյին «վորչ այլ կերպ, քան իբրև իղեալ հանդստի և անգործության»: Նրանք «աշխատանքը հանդուրժում էյին վորպես պատիժ», վորպես «անդուրեկան պատահականություն»: Իլյուչի հայրիկը՝ կալվածատեր Աբլումովը, «ամոզ ռբը, ձեռները քամակին դրած, անկյունից անկյուն և անցնում, ըթախտ և քաշում և խնչում, իսկ մայրիկը սուրճից անցնում է թեյի և թեյից ճաշի»: «Ծնողը մտքովն էլ չի անց կացնի ստուգել, թե քանի դեպ է հնձած»: Իբա փոխարեն՝ «Աբլումովկայում առաջին և կենսական հոգսը կերակարներ»: «Ճաշի մասին ամբողջ տունն էր խորհրդակցում»: Ճաշից հետո գալիս էր «ինչ վոր ամեն ինչ կլանող, անհաղթ քուն»: քնից հետո «խմում են տանյերկուական պնակ թեյ» «կյանքը վորոշվում էր յերեք գլխավոր գործողությամբ՝ ծնունդով, հարսանիքով և թաղումով» — լրացուցիչ «խայտածամուկ թափորով»՝ մկրտության, անվանակոչության, ընտանեկան տոների, բարեկենդանի, թաթախման, աղմկալի ճաշերի, աղգակցական հավաքույթների, վողջույնների, շնորհավորությունների» և այլն: Սնունդ և բազմացում — ահա Աբլումովյան կալվածատիրական կենցաղի նախահիմքերը:

Բնական է, վոր այսպիսի զգվանքը դեպի աշխատանքը պիտի գցեր տնտեսությունը և աղքատացներ կալվածատերերին: Աբլումովկայի տնտեսությունը բնական էր: Սյատեղ «գյուղացիք վորոշ ժամանակ հացահատիկ էյին կրում վորդայի մերձավորագույն նավահանդիստը», «յեվ տարին մի անգամ վոր մանք դնում էյին տոնավաճառ», «այլ ևս վորչ

95

փոքի հետ վոչ մի հարարերութիւն չունեցին»։  
Իսկ կարլվածատեր Աբրամովները «ամեն մի ի-  
բի նկատմամբ, վոր տանը չէր արտադրվում,  
այլ ձեռք եր բերվում գնումով՝ ծայր աստի-  
ճան ժլատ ելին»։ Ինքը աղան տանու կարած  
կոչիկներ եր հագնում։ «Այնտեղ փող ծախսել  
չեցին սիրում»։ «Առհասարակ նրանք խուլ ե-  
ցին կապիտալների արագ և կենդանի շրջանա-  
ռության անհրաժեշտության, միջերգների  
ուժեղացրած արտադրողականության և փո-  
խանակության՝ քաղաքատնտեսական ճշմար-  
տութիւնների վերաբերմամբ»։ «Կապիտալ-  
նեքի միայն մեկ գործածութիւնը՝ — պահում  
եցին նրանց սնդուկում»։

Աբրամովյան կարլվածատերերի ամբողջ  
տնտեսական կյանքի գանգաղկոտության,  
անշարժության և ուժասպառության հետ  
միասին, ընկնում եր և նրանց կալուտերական  
մակարդակը։ Յեթե Աբրամովյան գեղացիներ-  
ից մի քանիսը տարեկը մի անգամ ելին տոնա-  
վածառ գնում, Աբրամովյան կարլվածատերե-  
րը, կարծես թե, տնից ավելի սակավ ելին  
գուրս գալիս։ Արտաքին աշխարհի հետ հարա-  
բերութիւններն այնքան հազվագեայ ելին,  
վոր յերբ մի անգամ քաղաքից նամակ բերին  
«բոլորը ապշեցին. տանտիրուհու գեմքը մին-  
չև անդամ մի քիչ այլայլվեց»։ չորս որ չեցին  
փտասանում նամակը բանալ։ Ինքը կարլվա-  
ծատեր Աբրամովը գրագետ գեղացուց լավ չէր

գրում՝ «գանդալ, ծուռ ու մուռ, դողդոջուն  
ձեռքով և այնպես զգուշությամբ, կարծես  
վորեւե վտանգավոր գործ եր կատարում»։  
Գիրք կարդալը «համարվում եր շոայութիւն,  
այնպիսի գործ, առանց վորի յել կարելի չե  
հեշտությամբ յոլա գնալ»։ Աբրամովյան կալ-  
վածատերերն այնքան ելին ընկել, վոր «ժա-  
մանակի հաշիվը տանում ելին տոներով, տար-  
վա յեղանակներով և տնային ու ընտանեկան  
դեպքերով, չդիմելով յերբեք վո՛չ ամիսներին,  
վոչ ամսաթվերին»։ Բացի հայր Աբրամովից  
«մնացածները չփոթում ելին և՛ ամիսների ա-  
նունները, և՛ ամսաթվերի կարգը»։

Աբրամովների ընտանիքում ճորտատիրա-  
կան դատնութիւնների արտահայտութիւն-  
ներ չկային, ինչպես լինում եր ուրիշ կարլվա-  
ծատերերի մոտ, վորոնք ավելի ազահ ելին  
դեպի հարստութիւնը և իշխանութիւնը։ Աբ-  
րամովները բարեսիրտ ելին։ Սակայն մինչև վո-  
րոչ սահման։ Սա խողաղ, բայց համոզված  
ճորտատիրութիւն ե։ Հայր Աբրամովը ծուլ  
ե և բարեսիրտ, «բայց հապա փորձիր նրան ուչ  
տալ թաչկինակը, աղաղակ կբարձրացնի ան-  
կարգութիւնների համար և ամբողջ տունը  
գլխիվայր շուռ կտա»։

Այսպիսի տնտեսական և կենցաղային մի-  
ջառվայր պատկերելով, Գոնչարովը պատ-  
մում ե, թե ինչպես եր գնում այդ միջավայրում  
փոքրիկ աղայի դաստիարակութիւնը։ Իլյու-  
շին վոչ միայն աշխատանքի չեցին ընտելաց-

նում, այլ ընդհակառակը՝ արդելում էյին. փոքր աղայի մոտ նշանակված ճորտ ծառա Չախարը «դայակի նման նրա վտոներին և քաշում գուլպաները, հազցնում է կոշիկները. իսկ Իլյուչան, վոր արդեն տասնչորս տարեկան տղա յե, պառկած նրան դեմ և անում միայն այս կամ մյուս վտաքը. իսկ յեթե վորևե բան մի քիչ լավ չթվա, այն ժամանակ Չախարի քրթին վտաքով կթրխկացնի: Յեթե դժգոհ Չախարկեն մտքովն անց կացնի դանգատվել՝ դեռ մեծերից ել հարվածներ կտաննա»: «Կայտառ տղան ուզում է վրա պրծնի և ամեն ինչ ինքն անի».— Բայց այդ ճորտատիրական հասկացողություններով անթույլատրելի յե.— հանկարծ հայրն ու մայրը և յերեք մորաքույրը հինգ ձայնով կրղավեն՝ «ինչի՞, ո՞ւր: Իսկ Վասկե՛ն, Վանկե՛ն, իսկ Չախարկեն ինչի համար են»: «Յեւ Իլյա Իլյեչին վոչ մի կերպ չի հաջողվի վորեվե գործ անի ինքն իր համար»: Այսպիսի դատարարակությունն իր ազդեցությունն ունեցավ՝ «հետո նա գտավ, վոր այսպես ավելի հանդիստ է և ինքն ել սովորեց բըղավել՝ Ե՛յ, Վաս՛կա, Վան՛կա, ես տուր, ես տուր»: Մանկական խելքը վճռեց, վոր պետք է ապրել այնպես, ինչպես ապրում են նրա շուքը հասակավորները և վոչ այլ կերպ: Տղան սխաեմատիկորեն ընտելանում էր անգործության, արհամարհանքի դեպի աշխատանքը, վորկրամոլության, աղայակա՛ն ամբարտա՛վանության, ճորտատիրական շարժ ու ձևի և

նա Ֆիզիկապես ել թուլանում էր: «Արտահայտություն վորոնող ույթերը յետ էյին մղվում ներս և թռչնելով թուլանում»:

Կյանքը դեռ այն ժամանակ ել՝ անցյալ դարի յերեսնական-քառասնական թվերին պահանջում էր, վոր աղայի դավակները սովորեն: Բայց արլոմովյան ծուլացած միջավայրում ուսումը, ինչպես և աշխատանքը, նկատվում էր վորպես դժբախտություն, վորպես պատիժ: «Ուսումը չի փախչի», «հանաք բան չե ուսումը, ում ասես սամու պես կկըռացնի»: Ամեն առիթից ոգտվում էյին, վորպեսզի ընդհատեն ասելի ուսումը. յերկուշաբթի որն ասում էյին՝ «Այսոր չես գնա, հինգշաբթի մեծ տոն է», կամ՝ «ինչ սովորելու ժամանակ է՝ բլինի պիտի անենք» և այլն: Կյանքն իր պահանջներն ուներ: Մինչև անդամ ծուլացած և ընկած Աբլոմովները հասկանում էյին, վոր առորյա բարորության համար տըղային այսուամենայնիվ սովորել անհրաժեշտ է: Այս պատճառով նրանք, թեև մեծագույն տատանումներով, նրան ուղարկեցին Մոսկվա: Մոսկվայում լավ կրթություն ստանալուց հետո, Իլյա Իլյեչ Աբլոմովը չցանկացավ Աբլոմովկա վերադառնալ և բնակություն հաստատեց Պետերբուրգում, վորտեղ տասնյակ տարիներ ապրեց, վորտեղ և մեռավ: Գոնչարովն իր վեպի մեջ մանրամասն պատմում է, թե՛ ինչպես էր սովորում Աբլոմովը

Մոսկվայում, ինչպես եր ծառայում վորպես  
աստիճանավոր Պետերբուրգում, ինչպես նա  
սիրահարվեց և քիչ եր մնում ամուսնանար  
աշխարհիկ օրիորդի հետ, ինչպես քանդվեց  
այդ ամուսնությունը և ինչ վախճան ունեցավ  
Աբլումովը:

Աբլումովի կյանքը Մոսկվայում և Պե-  
տերբուրգում արտաբուստ նման չեր արլումով-  
յան կյանքին, բայց ըստ ելուծյան նույնն եր:  
Ինչպես դատախարակվել եր Աբլումովիայում  
Իլյա Իլյիչը, այնպես ել մտավ գերեզման:

Նույն ծուլությունը, նույն անգործու-  
թյունը, նույն արհամարհանքը գեպի աշխա-  
տանքը, նույն կյանքն ուրիշի՝ այն և—ճորտա-  
յին աշխատանքի հաշվին, իսկ հետեվանքը՝  
Փիզիկական թոշնածություն, աշխատանքի և  
պայքարի անընդունակություն, կամազրկու-  
թյուն, խղճուկ կախվածություն ուրիշներից՝  
ավելի յեռանդուններից, անհատականության  
դանդաղ կազմալուծում և, վերջապես, մա-  
րումն՝ մութ մեղանական շրջապատի մեջ:

«Աբլումովի յերազը» Գոնչարովը տպա-  
գրեց 1849 թվին, ճորտատիրության ամենա-  
խիստ ժամանակ: Ինքը Գոնչարովը վոչ հեղա-  
փոխական եր և վոչ ռադիկալ: Շատ-չատ նա  
չափավոր լիբերալ եր: Նա խուսափում ե ճոր-  
տատիրության սարսափները նկարագրելուց և,  
մինչև անգամ, հավատացնում ե, վոր, իբր թե,  
Աբլումովիայում գյուղացիք «բախտավոր» ե-  
լին ապրում:

Բայց Գոնչարովը տաղանդավոր գրող եր:  
Նա լավ գիտեր այն, ինչ նկարագրում եր և նը-  
կարագրում եր վարպետորեն: Յեվ յեթե «Աբ-  
լումովի յերազում» գյուղացիական կյանքի  
պատկերներ չի տվել, դրա փոխարեն վառ կեր-  
պով պատկերել ե ճորտատիրության դարաչըր-  
ջանի ստեպների գավառային կալվածատերե-  
րի կենցաղը բնատնտեսության պայմանե-  
րում:

Յե՛վ տնտեսական, և՛ հոգեբանական, և  
սոցիալական իմաստով այդ կալվածատիրա-  
կան կյանքը հետադիմական եր, մակարուծա-  
կան և անհեթեթ: Բնատնտեսության, ճորտա-  
տիրության հետ միասին՝ նա դատապարտ-  
ված եր կորստյան: Այսոր ել «Աբլումովի յերա-  
զը» մնում ե մեզ համար, վորպես արլումովչի-  
նայի անխուսափելի կազմալուծման ուսանե-  
լի պատկեր:

Ն. ՊԵՏՍՆՈՎ





«Ազգային գրադարան»



NL0312647



10.529